

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅ ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Հայ և պարսիկ ժողովուրդների պատմական, մշակութային, տնտեսական և քաղաքական կապերը իրենց արմատներով գնում են դարերի խորքը: Այդ կապերը առաջին հերթին պայմանավորված են այս երկու ժողովուրդների պատմական տերիտորիաների հարևանությամբ, որը անշուշտ չէր կարող հազարամյակների ընթացքում չնպաստել դրացի ազգերի տնտեսական և հոգևոր-մշակութային շփումներին և փոխազդեցություններին:

Հայերի և պարսիկների միջև այս փոխհարաբերությունների մասին առաջին հավաստի տեղեկությունները մենք քաղում ենք Աքեմենյան շահ՝ Դարեհ I-ի թողած Բեսիթունի սեպագիր արձանագրությունից, որն, ի դեպ, առաջին գրավոր հիշատակարանն է, որտեղ խոսվում է Արմենիա երկրի մասին՝ որպես քաղաքական առանձին միավորի:

Հետագա հարյուրամյակների ընթացքում, գտնվելով Արևելքի և Արևմուտքի շահերի բախման կենտրոնում, Հայաստանը, հատկապես Պարթևների տիրապետության շրջանում՝ գերազանցապես ապրում էր Իրանի քաղաքական, կուլտուրական շահերով: Հետևաբար, այդ ժամանակաշրջանում ևս նույնպիսի հետևողականություն չարձանակվում էր հայերի ու պարսիկների փոխհարաբերությունն ու շփումը, որն առանձնակի սերտ բնույթ ընդունեց Հայաստանում պարթևական ժագում ունեցող Արշակունիների դինաստիայի տիրապետության շրջանում (մ. թ. 63—428 թթ.), Հայիրանական այդ շփումների և փոխազդեցությունների մասին ակադավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը գրում է. «Հայաստանը, որը հին ժամանակներից ի վեր ներգրավված էր պարսկական պետությունների համաշխարհային քաղաքական ոլորտի մեջ, հարյուրամյակներ շփվում էր պարսիկների հետ միևնույն կուլտուրա-

կան աշխարհում: Այն ժամանակվանից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը և նրանց կրտսեր շառավիղը հաստատվեց Հայաստանում, երկու երկրների հասարակական-կենցաղային կապը ավելի սերտ դարձավ¹:

Գիտությանը հայտնի մի շարք փաստեր վկայում են, որ V դ. հայկական դերի ստեղծումից առաջ Հայաստանի պետական ու հասարակական կյանքում որպես գրավոր հաղորդակցման միջոց հունական գրին գուգահեռ օգտագործվել է պարսից գիրը, թերևս նաև պարսկերեն լեզուն: Պարսկերենը հունարենի հետ միասին եղել է հայ դպրոցի ու եկեղեցու գրական լեզուն, այն նույնիսկ պաշտոնական գործածության մեջ է եղել հայոց արքունիքում և անշուշտ տիրապետող բարձր խավերի շրջանում²: Այդ մասին մասնավորապես վկայում է Մ. Խորենացին իր «Պատմութիւն հայոց» աշխատության մեջ³:

Հայ-իրանական կապերը և փոխազդեցությունները նոր բովանդակություն ընդունեցին Իրանում Սասանյանների տիրապետության շրջանում: Նշված ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայի երկու հզոր պետությունների՝ Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության միջև սկսվում է երկարատև, համառ ու արյունոտ զինված պայքար, որի հիմնական առանցքն էր Հայաստանը: Այստեղ քրիստոնեությունը պաշտոնական կրոն հռչակվելուց հետո Բյուզանդական կայսրության հետ հոգևոր միասնության հիմքի վրա անխուսափելիորեն ամրապնդվելու էր նաև Հայաստանի քաղաքական կապը Բյուզանդիայի հետ: Սասանյան Իրանը դրա մեջ տեսնելով մեծագույն սպառնալիք իր քաղաքական շահերին, աշխատում էր գինու զորությամբ և գաղափարական պայքարի միջոցներով (զրադաշտականության բռնի տարածում) կասեցնել Բյուզանդական ազդեցության ծավալումը ինչպես Հայաստանում և Իրանի սահմանակից մյուս երկրներում, այնպես էլ հենց բուն Իրանում, որտեղ քրիստոնեության տարածումը ձեռք էր բերել լուրջ հաջողություններ: Այն, որ քրիստոնեության այս հալածանքները սասանյան թագավորների կողմից զուտ կրոնական մոլեռանդության և մոգերի սադրանքների արդյունք չէին, այլ իրենց հիմքում ունեին քաղաքական լուրջ խնդիրներ, ապացուցվում է նրա-

¹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 211.

² Բ. Լ. Զուլխադյան, Հայ-իրանական գրական առնչություններ (5—18 դդ.), Երևան, 1963, էջ 12:

³ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 11:

նով, որ երբ այսպես կոչված նեստորականները 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովից հետո խզեցին իրենց կապերը բյուզանդական (ուղղափառ) եկեղեցուց, որի հետևանքով արտաքսվեցին Բյուզանդական կայսրության սահմաններից (հռչակվելով հերձվածուհներ) և հաստատվեցին Իրանում, Սասանյան կառավարող շրջանները համոզվեցին, որ նեստորական և մոնոֆիզիթ եկեղեցու հետևորդները բոլորովին էլ համակրանքով չեն վերաբերում բյուզանդացիներին, հետևաբար, և վերանում էին քրիստոնյաների հալածանքների քաղաքական մոտիվները: Եվ V դ. 80-ական թվականներից հետո երկու քրիստոնեական դավանանքները՝ նեստորականը և մոնոֆիզիթականը (բայց ոչ ուղղափառը) ստացան լեգալ գոյության իրավունք ինչպես Իրանում, այնպես էլ նրա սահմանակից երկրներում⁴:

Այսպիսով, Սասանյանների տիրապետության շրջանում թեև Իրանի կառավարող շրջանների վերոհիշյալ քաղաքականության հետևանքով հայ և իրանական ժողովուրդների միջև հոգևոր-մշակութային կապերը որոշ չափով թուլանում են, սակայն երբեք չեն խզվում, ապրելով միայն ժամանակավոր նահանջ:

V դ. Մեսրոպ Մաշտոցի հայ գրերի ստեղծումից հետո Հայաստանում սկսվում է կրթական, մշակութային մեծ վերելք: Բացվում են բազմաթիվ դպրոցներ և մենաստաններ, բուռն թափով զարգանում է թարգմանական գրականությունը: Լեոն արտահայտությամբ այդ մի ժամանակ էր, երբ «...թարգմանությունը դառնում էր հայ կյանքի մի նոր և լուսափայլ երևույթ՝ ազգային հարուստ գրականության ծնող»⁵: Այդ թարգմանությունների շնորհիվ հազարամյակների արհավիրքներից փրկվել և մեր օրերն են հասել այնպիսի գործեր, որոնք եզակի են Առաջավոր Ասիայի կենդանի կամ անհետացած ժողովուրդների պատմության հարցերը լուսաբանելու տեսակետից:

Թարգմանական գրականության աննախընթաց զարգացման հետ միաժամանակ V դ. հիմք դրվեց նաև հայ ինքնուրույն պատմական գիտությանը: Մեր առաջին պատմիչները սկսեցին սեեռուն հետաքրքրություն դրսևորել հարևան ժողովուրդների նկատմամբ, Առաջին հերթին այդ հետաքրքրությունների կիզակետում էր գրտ-

⁴ Տե՛ս E. Ter-Minassian, Das Christentum im alten Persien (Die Religion in Geschichte und Gegenwart, Vierter Band, ss. 1383—1384), Ե. Տեր-Մինասյան, Հնդհանուր եկեղեցական պատմություն, հ. 1, Էջմիածին, 1908, էջ 289—291:

⁵ Լեո, Երկրի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 16:

ներվում Սասանյան իրանը, մանավանդ, որ վերջինիս քաղաքական գերիշխանությունը տարածվում էր Հայաստանի վրա: V դ. և հետագա դարերի հայ պատմիչների երկերում ուղղակի կամ անուղղակի ձևով րենությունն են առնվում իրանի պատմության, փիլիսոփայության, կրոնական հայեցողությունների ու գաղափարախոսության, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի վերաբերյալ ամենաբազմապիսի հարցեր: Հայկական այդ աղբյուրների հաղորդած տեղեկությունները առաջնակարգ նշանակություն ունեն ոչ միայն հայ-իրանական դարավոր կապերի և հոգեվոր-մշակութային փոխազդեցությունների պատմությունը հյուսելու, այլև իրանի հին և միջնադարյան շրջանների պատմության հարցերի մեջ խորամուխ լինելու տեսակետից:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ իրանագիտության ակունքները սկիզբ են առնում դարերի խորքից, նոր ժամանակների արևելագիտությանը մատուցելով փաստական և քննական այնպիսի հարուստ նյութ, որը մեծ ավանդ է Արևելքի վերաբերյալ մարդկության կուտակած գիտելիքների գանձարանում:

Այժմ համառոտակի կանգ առնենք հայ հին և միջնադարյան այն պատմիչների ստեղծագործությունների վրա, որոնք խիստ շահեկան ու արժեքավոր են իրանի պատմության տարբեր դրվագները ուսումնասիրելու տեսակետից:

Ժամանակագրական կարգով ամենահին հայ պատմիչը Ագաթանգեղոսն է, որից մեզ է հասել «Պատմություն հայոց» աշխատությունը⁶: Այս գործը շափազանց կարևոր սկզբնաղբյուր է վաղ քրիստոնեության պատմության, ինչպես նաև Հայաստանում և հարևան երկրներում հեթանոսության մասին: Ագաթանգեղոսի աշխատությունը դեռևս միջնադարում իր վրա է բեռել այլազգի պատմիչների ուշադրությունը: Պատահական չէ, որ այն առաջին հայերեն գիրքն էր, որ թարգմանվել էր օտար լեզուներով: Մասնավորապես մեզ են հասել Ագաթանգեղոսի հունարեն և արաբերեն թարգմանությունները, որոնք խմբագրվել են VII և հետագա դարերում: Ագաթանգեղոսի պատմության հունարեն թարգմանության լավրենտյան տարբերակում (XII դ.)⁷ պահպանվել է իրանում

⁶ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց: Աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանաեանց, Տիֆլիս, 1909.

⁷ "Agathangelus und die Akten Gregors von Armenten", aus dem fünfunddreissigsten Bande der Abhandlungen der königlichen Gesellschaft der wissenschaften zu Göttingen. Göttingen, 1887, ss. 3—88.

Արշակունյան հարստության անկման և Սասանյանների հաղթանակի վիպական զրույցը⁸, որը որոշակի լույս է սփռում իրանի պատմության այդ կարևոր իրադարձությունների վրա:

Ագաթանգեղոսին ժամանակակից է Փավստոս Բյուզանդը կամ Բյուզանդացին, որից մեզ է հասել «Պատմություն հայոց» վերնագրով աշխատությունը: Այն ընդգրկում է 330—387 թթ. միջև ընկած ժամանակաշրջանը, հայկական խոսքով թագավորի գահակալությունից մինչև Հայաստանի բաժանումը Սասանյան իրանի և Բյուզանդիայի միջև: Այն կարևոր սկզբնաղբյուր է ինչպես Արշակունյաց Հայաստանի հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության, այնպես էլ իր ժամանակի Մերձավոր և Միջին Արևելքի, հատկապես իրանի պատմության համար: Փավստոսի աշխատության արժեքը նրանում է, որ նա իբրև ժամանակակից և ականատես վկա միանգամայն հավաստի տեղեկություններ է հաղորդում Հայաստանում և հարևան երկրներում տեղի ունեցող պատմական իրադարձությունների մասին: Նրա աշխատությունը հատկապես անզուգական աղբյուր է IV դ. իրանի պատմության ուսումնասիրության համար⁹: Նրանում կարևոր տեղեկություններ կան նաև IV դ. հայ-պարսկական և պարսկա-բյուզանդական հարաբերությունների մասին: Փավստոսի աշխատության նկատմամբ մեծ հետաքրքրության ապացույց է այն, որ դեռևս VI դ. նրանից օգտվել է հույն պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին և որոշ հատվածներ թարգմանել է հունարեն¹⁰: Նոր ժամանակներում Փավստոսի պատմությունը թարգմանվել է եվրոպական մի շարք լեզուներով. ֆրանսերեն (1867 թ.), գերմաներեն (1879 թ.), ռուսերեն (1953 թ.) և այլն:

V դ. հայ պատմիչ է նաև Ղազար Փարպեցին, որի «Պատմութիւն հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությանն ընդդեմ Սասանյան իրանի: Փարպեցու սկզբնաղբյուրն ընդգրկում է 387—486 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի պաժամական իրադարձությունների նկարագրությունը, որտեղ արտացոլում են գտել նաև իրանում, Բյուզանդական կայսրություն-

⁸ Բ. Լ. Չուբուսովան, Հայ-իրանական գրական առնչություններ, էջ 16—17:

⁹ Н. В. Пигулевская, А. Ю. Якубовский, И. П. Петрушевский, Л. В. Строева, Л. М. Беленицкий, История Ирана с древнейших времен до конца XVIII века, Л., 1958, стр. 38.

¹⁰ Ա. Գ. Արցախյան, Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երևան, 1959, էջ 35:

նում, Վրասաանում, Աղվանքում և Հայաստանի հարևան մի շարք երկրներում տեղի ունեցած պատմական անցուղարձերը: Փարպեցու «Պատմությունը» համընդհանուր ճանաչում է գտել որպես իրանի պատմության լավագույն և հավաստի սկզբնաղբյուրներից մեկը: Այն հատկապես արժեքավոր է հայ-իրանական հարաբերությունները լուսաբանելու տեսակետից:

V դ. կեսերին հայ-իրանական հարաբերությունների պատմությանը նվիրված ամենալավագույն սկզբնաղբյուրներից է Եղիշեի աշխատությունը¹¹: իրանի քաղաքական կյանքի մասին բազմապիսի տեղեկությունների հետ մեկտեղ այստեղ մենք գտնում ենք խիստ արժեքավոր նյութեր իրանական ժողովուրդների կրոնական հայեցողությունների, մասնավորապես զրադաշտական կրոնի գաղափարախոսության, հին իրանցիների կենցաղի, իրանի աշխարհագրության և այդ երկրին ու նրա ժողովուրդներին վերաբերող բազմաթիվ այլ հարցերի մասին: Եղիշեի աշխատությունը տարբեր լեզուներով թարգմանվել է ավելի քան 40 անգամ, որը, անշուշտ, վկայում է նրա նկատմամբ համաշխարհային արևելագիտության տածած մեծ հետաքրքրությունը:

Հայ ժողովրդի առաջին գիտական պատմությունը հնագույն ժամանակներից սկսած մինչև Արշակունյաց հարստության անկումը և Հայաստանի քաղաքական անկախության վերացումը դրել է V դ. պատմիչ Մովսես Խորենացին, որը սերունդների կողմից ստացել է պատմահայր և քերթողահայր անունը: Իր «Պատմություն հայոց»¹² աշխատությունը շարադրելիս Խորենացին ձեռքի տակ է ունեցել մի շարք հունական և ասորական հեղինակների աղբյուրներ, որոնցից մի քանիսը գիտական աշխարհին հայտնի են դարձել միայն Խորենացու գրքի միջոցով: Խորենացին մտանվորապես օգտվել է Հերոդոտից, Հովսեփ Փլավիոսից, Եվսեբիոս Կեսարացուց, Բարգածանից, Պորփյուրից, Փլինիոսից, Պոլիկրատեսից, Մանեֆոնից և այլ հեղինակներից: Նրա պատմության համար աղբյուր են հանդիսացել նաև հայկական բանահյուսությունը, հարեվան ժողովուրդների ավանդական զրույցները, զանազան պաշտոնական փաստաթղթեր, վիճական արձանագրություններ և այլն: Այլ կերպ ասած, լինելով իր ժամանակի կրթված և բազմակող-

¹¹ Եղիշե, Պատմություն Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Վենետիկ, 1893:

¹² Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968:

մանիորեն զարգացած անձնավորութիւններից մեկը, հորինացին լայնորեն օգտագործել է նյութական, գրավոր և բանավոր մշակութի նվաճումները:

Մովսես հորինացու աշխատութիւնը միաժամանակ անփոխարինելի սկզբնաղբյուր է Մերձավոր և Միջին Արեւելքի երկրների պատմութեան համար: Նրա արժեքը ոչ միայն փաստերի հարստութեան մեջ է, այլ նրանց հավաստիութեան մեջ: Խորհնացին այն եզակի պատմիչներից է, որը քննադատական մոտեցում է ցուցաբերում իր օգտագործած բազմաթիվ սկզբնաղբյուրների նկատմամբ: Այս իսկ տեսակետից նրան համարում են պատմաբան բառիս ժամանակակից իմաստով:

Մովսես հորինացու աշխատութիւնը հատկապես արժեքավոր է իրանի պատմութեան համար: Նրանում պարունակվում են հարուստ տեղեկութիւններ, մասնավորապես իրանական վիպական գրույցների մասին: Այսպես, իրանական «Շահ-Նամե» էպոսի հերոս Ռուստամի ամենավաղ գրանցումը պատկանում է հորինացուն: Այդ առթիվ անգլիացի գիտնական էդուարդ Բրաունը գրում է, որ «Ռուստամի անունը գտնվել է միայն ուշ շրջանի պահլավական գրութիւնների մեջ մեկ կամ երկու տեղ»¹³: մինչդեռ նրա հուժկու գործերը հայտնի են եղել հայազգի Մովսես հորինացուն¹³:

Ֆիրդուսուց դեռ շատ առաջ հորինացին իր պատմութեան մեջ գրանցել է նաև Բյուրասպի Աժդահակի առասպելը, որին հատկացրել է մի առանձին գլուխ «Ի պարսից առասպելաց յաղագս Բիւրասպի Աժդահակայ» վերնագրով:

Համաշխարհային նշանակութիւն ունեցող այս երկն արդեն ավելի քան երկու դար ուսումնասիրում են նաև օտար պատմաբանները և բանասերները: Այդ ժամանակամիջոցում հորինացու «Պատմութիւն»-ը թարգմանվել է բազմաթիվ եվրոպական և արեւելեյան լեզուներով՝ լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, շվեդերեն, ռուսերեն, հունգարերեն, պարսկերեն և այլն:

Հատկապես վերջին տարիներին իրանական պատմագրութիւնը մեծագույն ուշադրութեամբ ուսումնասիրում է հորինացու պատմութիւնը, նրա մեջ գտնելով եզակի տեղեկութիւններ իրանի պատմութեան բազմաթիվ չուսաբանված հարցերի բարձրացնելու և պարզելու համար:

Հարկ է նշել, որ զրադաշտականութեան կրօն-փիլիսոփայական գաղափարախոսութեան և նրա մեջ սասանյանների շրջանում

¹³ E. G. Browne, A Literary history of Persia. From the earliest times until Firdawsī, London, 1902, p. 117.

Հանդես եկած աղանդավորական ուղղությունների էության ու ընդունելի մասին գիտությունը հասել են շատ քիչ տվյալներ։ Այդ բացը հիմնականում լրացնում է V դ. հայ պատմիչ Եղիշիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը¹⁴։ Կողբացին այս աշխատությունը գրել է հերքելու համար զանազան աղանդներ և կրոնական գաղափարախոսություններ։ Նա հատկապես կանդ է առել իր ժամանակի աղանդներից չորսի վրա, այդ իսկ պատճառով նրա աշխատությունը բաժանված է չորս մասի. ա) «Եղծ աղանդոց հեթանոսացն, բ) «Եղծ քէշին Պարսից», դ) «Եղծ կրօնից Հունաց իմաստնոցն» և դ) «Եղծ աղանդոյն Մարկիոնի»։

«Այսպիսի մի գործ հաջողությամբ կատարելու համար,— գրում է Լեոն,—հարկավոր էր ունենալ քննադատական-վերլուծական ուժեղ կարողություն, զինված գիտության հայթայթած միջոցներով, լավատեղյակ փրկիսոփայական և աստվածաբանական տեսություններին և գրականության։ Եվ Եղիշիկը հենց այդպիսի մի երևույթ է ներկայացնում մեզ, եզակի և անհամեմատելի՝ մեր ամբողջ գրականության մեջ»¹⁵։

«Եղծ աղանդոցի» կարևորագույն և այստեղ մեզ հետաքրքրող մասը երկրորդ գլուխն է, որտեղ Եղիշիկը քննադատում ու հերքում է պարսից «քէշը»՝ զրադաշտականությունը, այսինքն Սասանյան պետության պաշտոնական կրոնական գաղափարախոսությունը¹⁶։

Եղիշիկի աշխատությունը իր ժամանակի համար ուներ ոչ միայն զուտ փրկիսոփայական տրակտատի բնույթ, այլև այն հետապնդում էր որոշակի քաղաքական նպատակներ։ Եղիշիկ Կողբացին հայ այն գործիչներից էր, որոնք այդ տազնապալից ժամանակներում առավել մեծ եռանդով և կրքով հանդես էին գալիս իրենց ժողովրդի պաշտպանի դերում։ Եղիշեն վկայում է, որ Բագրևանդի եպիսկոպոս Եղիշիկը մասնակցել է 449 թ. տեղի ունեցած Արտաշատի կրոնական ժողովին։ Այդ ժողովից հետո կազմվում է Հագկերտ II թագավորին ուղղված հայտնի պատասխանը, որի հիմքում դրվում է Եղիշիկի աշխատությունը։ Կողբացին իր աշխատության մեջ հանդես է գալիս չարին հնազանդելու «տեսության» դեմ և տեսականորեն հիմնավորում է պայքարի անհրաժեշտությունը չարի դեմ¹⁷։

¹⁴ Եղիշիկ Կողբացի, *Եղծ Աղանդոց*, Թիֆլիս, 1914։

¹⁵ Լեո, *Երկերի ժողովածու*, Հ. 2, էջ 39։

¹⁶ Եղիշիկ Կողբացի, *Եղծ Քէշին պարսից*, Թիֆլիս, 1913։

¹⁷ В. К. Чалоян, К вопросу об учении Езника Кохбаци, армянского философа, Ереван, 1940.

Պետք է նշել, որ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» դիտության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այսօր, Զրադաշտական կրոնի և նրա աղանդների ուսումնասիրության համար նա ունի բացառիկ կարևոր արժեք: Կողբացին չափազանց հարուստ փաստեր է արձանագրել նաև V դ. պարսից հավատալիքների ու դիցաբանական հասկացողությունների մասին: Պատահական չէ, որ հմլրոպական գիտնականները այդ գործի վերաբերյալ գրել են մի շարք քննադատական ուսումնասիրություններ¹⁸, և լույս ընծայել «Եղծ Աղանդոց»-ի բնագրի գիտական հրատարակությունը մի շարք լեզուներով¹⁹:

Այսպիսով, եթե ընդհանուր առմամբ գնահատելու լինենք V դ. հայկական աղբյուրների նշանակությունը իրանի պատմության վերաբերյալ, ապա պետք է նշել, որ համաշխարհային դիտություն համար դրանք ունեն իսկապես անզուգական արժեք: Եվ դա բացատրվում է ոչ միայն այդ աղբյուրների պարունակած հարուստ և հավաստի փաստերով, այլև նրանով, որ Սասանյան իրանի պատմության վերաբերյալ ժամանակակից իրանագիտությանը հասած փաստերը ծայրահեղորեն սուղ են:

Իրանի պատմության համար առաջնակարգ նշանակություն ունեն նաև VII դ. հայկական աղբյուրները: Այդ դարաշրջանը առհասարակ աչքի է ընկնում համաշխարհային պատմական նշանակություն ունեցող իրադարձություններով, որոնց թվին են պատկանում պարսկա-բյուղանդական պատերազմները, արաբների քաղաքական ասպարեզ իջնելը և նրանց առաջին արշավանքները, Սասանյան իրանի անկումը, բյուզանդական տիրապետությունների նվաճումը արաբների կողմից և այլն:

Սակայն «չնայած սրան, ո՛չ պարսկական, ո՛չ էլ հունական, լատինական, ասորական, արաբական կամ այլ գրականությունների VII դ. չեն ստեղծել զուտ պատմագրական որևէ երկ, ուր ամփոփված լիներ նշված դեպքերի նկարագրությունը: Վերջիններիս մասին արձագանքներ մնացել են ավելի ուշ ժամանակներում ապրած հեղինակների երկերում²⁰:

¹⁸ Տե՛ս H. Gelzer, *Eznik und die Entwicklung des persischen Religions systems* (Zeitschrift für armenische philologie), 1902.

¹⁹ Տե՛ս "Eznik de Kolb, De "deo., Edition critique du texte armenien-tome XXVIII, fasc. 3, Paris, 1959: "Eznik de Kolb, De "Deo., Traduction française, notes et tables par L. Mariés et Ch. Merier, Patrologia t. XXVIII, fasc. 4, Paris, 1959.

²⁰ Գ. Արքայան, Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը, ԳԱ հրատ., Երևան, 1965, էջ 7:

Այս իսկ տեսակետից միջազգային պատմագրության մեջ միակ բացառությունը կազմում է VII դ. հայ պատմիչ Սեբեոսի «Պատմութիւնը»²¹, որի շնորհիվ հայ մատենագրությունը գրավում է առաջնակարգ դեր VII դ. համընդհանուր պատմության առաջնորդում²²: Սեբեոսի մոտ, VI—VII դարերի Հայաստանի պատմության հետ կապակցված, մանրամասն նկարագրված են պատմական այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Մերձավոր և Միջին Արևելքում: Հեղինակը մանրակրկիտ նկարագրում է բյուզանդական կայսր Հերակլի պարսկական արշավանքները, առաջին արաբական արշավանքները Հայաստան, Իրան, Միջազգետք և բյուզանդական շրջաններ:

Հատկապես Իրանին վերաբերող բաժինները աչքի են ընկնում փաստերի աննկարագրելի հարստությամբ: Մասնավորապես հանգամանորեն խոսվում է պարթևների հզորանալու և նրանց անկման, սասանյանների շրջանի քաղաքական պատմության և նրանց պետության ներքին իրավիճակի, վարչակարգի, ռազմական կազմակերպության և այլ բազմաթիվ հարցերի մասին: Սեբեոսի պատմությունը սակայն առավել կարևոր է Սասանյան Իրանի պատմության վերջին շրջանի և արաբական արշավանքների սկզբնավորման պատմության համար²³, որոնց ժամանակակիցն է եղել ինքը՝ հեղինակը: Խիստ արժեքավոր են նաև Սեբեոսի հաղորդած տեղեկությունները քուշանների մասին, «որոնց հնազանդվում էին Արևելքի և Հյուսիսի բոլոր ժողովուրդները»:

Սեբեոսի պատմության մեջ խոսվում է նաև Արևելքում մեծ տարածում ունեցած խոսրով և Շիրին առասպելի, և արժեքավոր հիշատակություն բերվում իրանական էպոսի հերոսներից Սպանգիատի (Սպանդհարի) մասին:

Պատմական-արևելագիտական որոշակի արժեք է ներկայացնում նաև VII դ. մի այլ հեղինակի՝ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարոնի» երկը, որը գրված է առավելապես ժողովրդական զրույցների հիման վրա: Այս սկզբնաղբյուրը հաղորդում է արժանահիշատակ նյութեր մասնավորապես վաղ քրիստոնեության պատմության վերաբերյալ, ինչպես նաև VI—VII դարերում Սա-

²¹ Սեբեոս, Պատմութիւն: Բաղդատուիթեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանք, Երևան, 1939:

²² Գ. Աբղաթյան, նշվ. աշխ., էջ 7:

²³ Н. В. Пигулевская, А. Ю. Якубовский и др. История Ирана..., стр. 38.

սանյան իրանի դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին:

XI—XIV դարերի հայ հեղինակները իրանի պատմության վերաբերյալ իրենց աշխատություններով լրացնում են պատմական տեղեկությունների այն բացը, որը հետևանք էր նշված դարաշրջաններում իրանի քաղաքական կյանքի հեղհեղուկ և անկայուն վիճակի:

Այդ հեղինակներից հիշատակության արժանի են Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը (XI դ.), որի «Պատմութիւն տիեզերականը» կարևոր սկզբնաղբյուր է ընդհանուր պատմության համար: Նա իր ստեղծագործության մեջ գլխավորապես կանգ է առել Կովկասի, իրանի, Փոքր Ասիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի մի շարք այլ երկրների պատմության վրա:

XI դ. հեղինակ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում»²⁴ իրանական վիպական զրույցներից պահպանվել են հետաքրքիր բեկորներ, որոնք արժեքավոր նյութ են իրանական մշակույթի մի շարք հարցերի ուսումնասիրության համար:

XII դ. հայ ականավոր ժամանակագիր է Սամվել Անեցին: Նրա «Քրոնիկոն» աշխատությունում առանձին աղյուսակներով տրված են պարսկական, բյուղանդական և հայկական թագավորների ժամանակագրությունը, որը հնարավորություն է տալիս համեմատական ուսումնասիրության հիման վրա ստուգել կասկածելի թվականները:

XIII դ. հայ նշանավոր պատմագիրներից է Կիրակոս Գանձակեցին, որի «Հայոց պատմությունը»²⁵ կարևոր նշանակություն ունի Մերձավոր և Միջին Արևելքում մոնղոլների նվաճումների և մոնղոլական Հուլաղուիդների պետության պատմությունը ուսումնասիրելու համար: Ինչպես հայտնի է, թաթար-մոնղոլները սլասյակ տարիներ, հատկապես էլիսանության շրջանում, տիրել են իրանին: Այնուհետև Զամալ-էդ-դինի տիրապետությունը խորտակելուց հետո նրանք ավելի քան մեկուկես հարյուրամյակ իրենց տիրապետությունն են հաստատում Առաջավոր Ասիայում, մասնավորապես իրանում, Հայաստանում, Աղվանքում և արլն:

²⁴ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը»: Բնագիրն առաջաքանով ու ծանոթագրություններով առաջին անգամ լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910:

²⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

Կիրակոս Գանձակեցին ուշագրավ փաստեր է հաղորդում մոն-ղոլների պետական-վարչական կառուցվածքի, նրանց կառավար-ման շրջանում քաղաքական իրադարձությունների մասին և այլն:

XIII դ. վերջի և XIV դ. սկզբի հայ հեղինակ Գրիգոր Ակնեցոու «Պատմութիւն ազգին նետողաց»²⁶ բովանդակալից աշխատությու-նում բերվում են բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ մոն-ղոլների լեզվի ու կենցաղի, ինչպես նաև նրանց կառավարման սիստեմի և հարկային քաղաքականության մասին:

XII—XIV դարերի հայ պատմիչներից, որոնց գործերում ու-շադրավ նյութեր կան Իրանի և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտե-սական պատմության և մշակութային կյանքի մասին կարելի է հիշատակել Արիստակես Լաստիվերացուն (XII դ.), Մատթեոս Ուտտիցոուն (XII դ.), Վարդան Արևելցուն (XIII դ.), Ստեփանոս Օրբելյանին (1258—1304 թթ.) և այլն:

Հայտնի է, որ XIV—XV դարերում հայ իրականության մեջ այլևս չկային պատմության այնպիսի կարկառուն դեմքեր, որոնք այնքան շատ էին V—XIII դարերում: Այդ պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ նշված դարաշրջանները հայ ժողո-վրդի պատմության ամենամոռյալ ժամանակներն էին: Եվ ահա պատմիչներին ինչ-որ չափով դալիս են լրացնելու ժամանակա-գիրներն ու տարեգիրները:

Միջնադարյան Հայաստանի մտավոր կուլտուրայի բազմաթիվ մեծ ու փոքր օջախներում ստեղծված կամ ընդօրինակված բաղում ձևագիր հիշատակարաններ²⁷, ժամանակագրություններ²⁸ և այլն չափազանց կարևոր աղբյուրներ են ոչ միայն Հայաստանի քա-ղաքական, տնտեսական, կուլտուր-հասարակական հարցերի լու-սաբանման ու ստուգման, այլև մերձավոր-արևելյան երկրների, ե առաջին հերթին Իրանի, Միջագետքի և Փոքր Ասիայի ժողովուրդ-

²⁶ XIX դ. այս աշխատության հեղինակ էր համարվում Մաղաքիան: Նրա անունով հրատարակված է հայկական տեքստը (Ս. Պետերբուրգ, 1870) և Կ. Պատկանովի ռուսերեն թարգմանությունը: *Տե՛ս Григор Акнерци (Магакян инок). История монголов инок Магакян, пер. с арм. К. П. Патканова. СПб., 1871.*

²⁷ Տե՛ս «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան 1950. «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955. մասն Բ., Երևան, 1959, կազմեց Լ. Ս. Խաչիկյան:

²⁸ «Մանր ժամանակագրություններ 13—18 դդ.» (կազմեց Վ. Ա. Հակոբյան), հ. 1, Երևան, 1951. հ. 2, Երևան, 1956:

ների անցյալի ուսումնասիրության համար: Դրանց արժեքը առաջին հերթին նրանում է, որ նրանք կազմված են ականատես և ժամանակակից անձնավորությունների կողմից և ճշմարտապատում արձանագրություններ են, որոնք մեծ չափով օգնում են ճշտելու XIX—XV և հետագա դարերի Իրանի պատմության բազմաթիվ մուկ ու վիճելի հարցերը:

Առանց վերապահության կարելի է ասել նաև, որ միջնադարի հայ մշակութային կենտրոնները հանդիսացել են մեր ժողովրդի պատմության մեջ այն առաջին գիտական օջախները, որտեղ գիտնականների անդադրում ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ Արևելքի երկրների ու ժողովուրդների մասին հսկայական հսկայական քանակությամբ նյութեր, որոնք մինչև օրս էլ դժուկացրված են աշխարհի տարբեր գրադարաններում, թանգարաններում, պահոցներում և արխիվներում և սպասում են իրենց ուսումնասիրողներին: Դրան պետք է ավելացնել, որ նոր ժամանակներում ինչպես հայ գիտնականներն, այնպես էլ Եվրոպական ուսումնասիրողներն այդ հսկայական նյութի մի մասը առավելապես ուսումնասիրել են հայագիտական տեսանկյունից և դժուկացրել կարոտ է զուտ արևելագիտական առումով ուսումնասիրման:

Միջնադարյան Հայաստանում սլաոմագրության հետ մեկտեղ բավականին բարձր զարգացման էր հասել նաև աշխարհագրությունը: Դա, անշուշտ, պետք է բացատրել նրանով, որ այդ գիտությունը ուներ կարևոր գործնական նշանակություն: Պատահական չէ, որ համարյա առանց բացառության հին և միջնադարյան հայ բոլոր պատմիչները իրենց աշխատություններում ուղղակի կամ միջանկյալ ձևով տալիս են նաև աշխարհագրական բազմապիսի տեղեկություններ Հայաստանի և հարևան երկրների մասին:

Մեզ հասած ամենահին աշխարհագրական բովանդակությամբ աշխատությունը VII դ. հայ խոշոր գիտնական, մտածող Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց» անունով գործն է, որը սխալմամբ վերագրվում էր Մովսես Խորենացուն²⁹: Այստեղ Շիրակացին կանգ է առել երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի վրա: Հատկապես նա մանրամասնորեն խոսում է Հայաստանի և

²⁹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940: Անանիա Շիրակացու կյանքի և ստեղծագործության մասին տե՛ս մանրամասն Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944: Նույնի՝ Անանիա Շիրակացի (կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1958:

հարեան Երկրների՝ Իրանի, Վրաստանի, Աղվանքի, Հյուսիսային Կովկասի քաղաքների, շրջանների, նոանց վարչական բաժանման, կարևոր դեպքերի, լեռների, ճանապարհների մասին: Խիստ արժեքավոր են Շիրակացու հաղորդած տեղեկությունները Սասանյանների շրջանում Իրանի վարչա-տնտեսական բաժանման, գյուղատնտեսության, մշակվող կուլտուրաների մասին և այլն: «Աշխարհացոյց-ի» հեղինակը տալիս է նաև պարսկական միապետության նկարագիրը, պատմական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իրանական ժողովուրդների, նրանց տեղաբաշխման վայրերի, զբաղմունքների, կենցաղի, կրոնական հավատալիքների մասին և այլն: Այսպիսով, Ա. Շիրակացու այս գործը կարևոր աղբյուր է ինչպես Իրանի պատմական աշխարհագրության, այնպես էլ այդ երկրի պատմության համար:

Մեզ հասել է նաև Անանիա Շիրակացու աշխարհագրական բովանդակությամբ մի այլ աշխատություն ևս, որը դեռևս անտիպ է և պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանում³⁰: Այդ աշխատությունը կրում է «Մղոնաշապիք» խորագիրը: Այստեղ հեղինակը ծանոթացնում է քարավանային ճանապարհների և առևտրաշատ քաղաքների հետ: Նա հատկապես արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանից մինչև Պարսից ծոց ձգվող առևտրական ճանապարհի, այդ ճանապարհի վրա գտնվող առևտրական կարևոր կենտրոնների, նրանց միջև եղած հեռավորությունների մասին և այլն:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի ֆոնդում պահվում է նաև մի այլ ուշագրավ աշխարհագրական աշխատություն «Անուանք քաղաքաց Հնդկաց և Պարսից» վերնագրով, որի հեղինակը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ այն գրել է (1106—1110 թթ.) Հնդկաստանի և Իրանի հետ քաջածանոթ մի հայ առևտրական³¹:

Ուշ միջնադարում և պատմության նոր դարաշրջանի նախօրին Իրանի պատմության, հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ հայ պատմիչների և գիտնականների տածած հետաքրքրությունը ոչ միայն չի թուլանում, այլ, ընդհակառակը, ձեռք է բերում ավելի սկզբունքային բնույթ:

Ինչպես հայտնի է, XVI դ. Իրանի պատմության մեջ տեղի են ունենում կարևորագույն իրադարձություններ: Հարյուրամյակներ

³⁰ Ա. Գ. Աբրահամյան, Մատենադարանի ձեռագրի գանձերը, Երևան, էջ 69:

³¹ Նույն տեղում:

շարունակ տեաժ տրոհումից հետո վերջապես այդ դարաշրջանում ավարտվում է Լրկրի քաղաքական միավորումը Սեֆևյան պետության շրջանակներում: Զգալիորեն աշխուժանում է այդ նոր պետության տնտեսական կյանքը, առևտուրը ապրում է զգալի վերելք, ուժեղանում են Իրանի դիվանագիտական հարաբերությունները արտաքին աշխարհի՝ մասնավորապես եվրոպական պետությունների հետ և այլն:

Հիշյալ երևույթները նպաստում են իրանական մշակույթի և գլխավորապես պատմագրության զարգացմանը: Երևան են դալիս մի շարք պատմական ստեղծագործություններ առավելապես պարսկերեն լեզվով: Սակայն դրանց մեծ մասը աչքի էին ընկնում իրենց միակողմանիությամբ և միտումնավորությամբ: Բացի այդ, պարսիկ պատմագիրները բնավ կանգ չեն առել, կամ համարյա կանգ չեն առել սոցիալ-տնտեսական բնույթի տեղեկությունների վրա: Հետևաբար XVI դ. Իրանի պատմության ուսումնասիրության, մասնավորապես Սեֆևյան պետության քաղաքական զարգացման, պետական կարգի, վարչա-տնտեսական հարաբերությունների, ֆինանսների, սոցիալ-տնտեսական դրության, հարկային քաղաքականության, մշակութային կյանքի, ինչպես նաև արտաքին քաղաքական հարաբերությունների հետազոտման համար առաջնակարգ նշանակություն ունեն օտար աղբյուրները Իրանի մասին: Դրանց մեջ իրենց կարևոր տեղն ունեն հայկական բազմաբովանդակ և հարուստ աղբյուրները:

Թեև XVI դ. հայկական իրականության մեջ, ի տարբերություն նախորդ և հետագա դարերի, խիստ ամուլ է պատմագիտական աշխատություններով և այդ հարյուրամյակի հայկական աղբյուրները սահմանափակվում են լոկ մի շարք մանր ժամանակագրություններով և ձեռագրերի հիշատակարաններով, սակայն, այնուամենայնիվ այդ աղբյուրները ինչ-որ չափով լրացնում են այն բացը, որ նկատվում է իրանական աղբյուրների մեջ:

Հայկական սկզբնաղբյուրների արժեքը իրանական պատմագրության համար առաջին հերթին նրանում է, որ այդ աղբյուրները առավելապես ականատեսների վկայություններ են և միանգամայն վստահելի:

Բացի մանր ժամանակագրություններից, հիշատակություններից և այլն, որոնք իսկապես աչքի են ընկնում տեղեկությունների առատությամբ, հիշատակության արժանի է Սիմեոն Ապարանցու ՎՈՂԸ ի վերայ առմանն Թավրիզու գործը³², որը հատկա-

³² Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6548:

պես արժեքավոր սկզբնաղբյուր է XVI դ. իրանա-թուրքական հարաբերությունների պատմությունը ուսումնասիրելու տեսակետից: Սիմեոն Ապարանցին վկա է եղել 1585 թ. թուրքերի կողմից Թավրիզի գրավմանը և ստույգ տեղեկություններ է հաղորդում պատմական այդ իրադարձության մասին:

Հարկ է նշել, որ XVII դ. իրանական աղբյուրները աչքի են ընկնում իրենց առատությունը: Հայտնի են 25-ից ավելի աշխատություններ, չհաշված առանձին նահանգների պատմության վերաբերյալ գործերը և «Համընդհանուր պատմության» տիպի ստեղծագործությունները, որոնցում իրանի պատմությանը հատկացվում է մյուս մահմեդական երկրների հետ համատեղ որոշակի տեղ: Սակայն այդ աշխատությունների մեծ մասը առ այսօր չի հրատարակված, չի թարգմանված և քիչ է ուսումնասիրված³³: Բացի այդ, այդ աշխատությունների մեծ մասը տառապում է այդ շրջանի իրանական պատմությանը բնորոշ թերություններով: Հետևաբար եվրոպական աղբյուրների հետ համատեղ հայ պատմիչների գործերը մեծ նպաստ կարող են բերել XVII դ. իրանի պատմության ամենաբազմապիսի հարցերի ուսումնասիրության համար:

Այստեղ ավելորդ է նշել, որ առհասարակ XVII դ. հայկական իրականության մեջ կտրուկ կերպով տարբերվում է իր նախորդից աղբյուրների հարստությամբ և առատությամբ: Այդ հարյուրամյակի 40-ական թվականներից, Հայաստանում սկսված նոր տնտեսական վերելքի և ուսումնալուսավորչական շարժման պայմաններում ստեղծվեցին մի շարք պատմագիտական աշխատություններ, որոնցում համարյա առանց բացառության հեղինակները կանգ են առնում նաև իրանի պատմության տարբեր հարցերի վրա: Այդ պատահական չէր, որովհետև նշված դարաշրջանում Հայաստանի արևելյան հատվածի պատմությունը սերտորեն կապված էր Սեֆևյան պետության պատմության հետ և հայ պատմիչները, բնականաբար, չէին կարող չանդրադառնալ հարևան երկրում ծավալվող իրադարձություններին:

XVII դ. հայ պատմագրության ամենակարկառուն դեմքը անշուշտ Առաքել Դավրիժեցին է (1595—1669), որն իր «Պատմության»³⁴ մեջ շարադրում է 1601—1662 թթ. ընդգրկող ժամանակաշրջանը: Իր երկը գրելիս Դավրիժեցին օգտվել է XVI—XVII դա-

³³ Н. В. Пигулевская, А. Ю. Якубовский и др., История Ирана..., стр. 266.

³⁴ «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1896:

րերի բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններից և մանր ժամանակագրություններից, որոնք հարազատորեն մեջ է բերել Աշխատության զգալի մասում հեղինակը հանդես է գալիս որպես դեպքերին ականատես անձնավորություն կամ հենվում է ականատեսների վկայությունների վրա: Սակայն այս վերջին դեպքում նա ցուցաբերում է քննադատական մոտեցում և դրսևորում է խիստ զգուշություն: Այս կամ այն փաստը հաղորդելիս Դավրիժեցին անպայման աշխատում է ստուգել նրա հավաստիությունը և ճշտությունը, հատկապես ճշգրտել տվյալ իրադրության թվականը:

Թեև Դավրիժեցու աշխատությունը նվիրված է Հայաստանի պատմությանը, սակայն նա պատմական լայն էքսկուրսներ է կատարում նաև հարևան երկրների՝ Իրանի, Թուրքիայի և այլն պատմության վերաբերյալ, հատկապես մանրամասն տեղեկություններ հաղորդելով Ատրպատականի և Պարսկական Իրաքի վերաբերյալ:

Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», սակայն, դեպքերի սոսկ նկարագրություն կամ դինաստիական պատմություն չէ: Նա շահագնաց հետաքրքիր և հավաստի փաստերի հետ միաժամանակ տալիս է վերլուծություններ, որոնցում զգացվում է հեղինակի լայն մտահորիզոնը, դարաշրջանի խորը ըմբռնումը և պատմագրի փայլուն պատրաստությունը:

Դավրիժեցու վերոհիշյալ արժանիքները, ինչպես նաև այն, որ նա իրադարձությունները նկարագրելիս միշտ ազատ է մնում Սեֆևյան պաշտոնական պատմագրության տեսակետներից³⁵, նրա «Պատմությունը» դարձնում է լավագույն աղբյուր Իրանի XVII դ. պատմության համար: Պատահական չէ, որ իրանական պատմագրությունը և եվրոպական գիտությունը³⁶ մշտական հետաքրքրություն են դրսևորել Առաքել Դավրիժեցու նկատմամբ: Այսպես, իրանական պատմաբան Նասրուլլա Ֆալսաֆին իր «Շահ Աբբաս I-ի կյանքը» քառահատոր մենագրությունում լայնորեն օգտվում է Դավրիժեցուց, նրա երկը համարելով XVII դ. Իրանի պատմության համար հարուստ և հավաստի աղբյուր:

³⁵ Н. В. Пугачевская, А. Ю. Якубовский и др., История Ирана..., стр. 270.

³⁶ Դավրիժեցու «Պատմությունը» XIX դ. ֆրանսերեն է թարգմանել և հայ պատմիչների թարգմանությունների ժողովածուում հրատարակել ականգնիկոս Մ. Բրոսսեն (Տե՛ս М. Brosset, Collections d'historiens Arméniens, t. I, St. Petersbourg, 1874).

իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի, աշխարհադրության, ազգագրության, կենցաղի, իրանա-թուրքական պատերազմների, իրանահայ վաճառականների միջազգային առևտրական կապերի՝ հետևաբար նաև իրանի արտաքին տնտեսական հարաբերությունների, իրանահայ գաղութի և մի շարք այլ հարցերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակվում նաև XVII դ. պատմիչներ Գրիգոր Դարանազցու «Ժամանակագրությունում»³⁷, Զաքարիա սարկավազի «Պատմագրությունում»³⁸, Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունում»³⁹, Ավգուստինոս Բաջեցու «Ճանապարհորդությունում»⁴⁰։

Մեր օրերի մասնագետներին XVII դ. իրանի վերաբերյալ պատմական և տնտեսական ուսումնասիրությունների համար խիստ արժեքավոր նյութ է մատակարարում նաև Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհածողով» կոչվող անտիպ աշխատությունը, որը պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում⁴¹։ Այս աղբյուրը հատկապես բազմապիսի նյութեր է պարունակում իրանի հայ առևտրական կապիտալի և նրա դերի մասին Սեֆևյան պետություն տնտեսական և քաղաքական կյանքում։

Ինչ վերաբերում է XVII դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններին, ապա նրանցում մասնավորապես հարուստ նյութ է պարունակվում համարյա անընդմեջ մղվող թուրք-իրանական պատերազմների և դրանց հետևանքով այդ երկու պետությունների և նրանց քաղաքական գերիշխանության տակ գտնվող երկրների

³⁷ «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցույ կամ Դարանազցւոյ», Երուսաղեմ, 1915։

³⁸ «Զաքարեայ Սարկավազի պատմագրութիւն», հտ. 1—3, Վաղարշապատ, 1870։

³⁹ Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938։

⁴⁰ «Ճանապարհորդութիւն լեւորոպայ, գրչագիր ի Փարիզ» (սեշխարք մատենագրության հայոց», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5—26)։

Բաջեցիի ծնվել է Երեյակում։ Հետագայում եղել է Նախիչևանի հայ կաթողիկ համայնքի եպիսկոպոսը։ Հայտնի է, որ XVII դ. սկզբին Բաջեցին ուղևորվել է Եվրոպա, ուղեկցելով եվրոպական ինչ-որ դեսպանի։ Այդ ճանապարհորդության ժամանակ նա այցելում է Մոսկովյան պետություն, լեհաստան, Դերմանիա, Իսպանիա, Իտալիա։ Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ Ավգուստինոս Բաջեցին ամենայն հավանականությամբ կատարում էր Սեֆևյան կառավարության դիվանագիտական հանձնարարությունները։ Իսկ այդ, անշուշտ, վկայում է այն մասին, որ նա մոտ էր կանգնած իրանի քաղաքական շրջաններին։ Ավգուստինոս Բաջեցու տեղեկությունները Սեֆևյան իրանի քաղաքական կյանքի մասին միանգամայն արժանի են ուշադրության։

⁴¹ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № № 5994, 8443։

ընդհանուր ավերման, տնտեսության անկման, ֆեոդալական կամայականությունների ուժեղացման մասին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ նշված դարաշրջանի ձեռագրերի հիշատակարանները իրենց դրական կողմերից բացի (փաստերի հավաստիություն և այլն) ունեն նաև բացասական կողմեր: Նրանց հիմնական թերությունը, անշուշտ, նրանում է, որ գրիչներից շատերը (որոնց մեծ մասը հոգևորականության ներկայացուցիչներ են) դեպքերի ու իրադարձությունների նկարագրության մեջ ցուցաբերում են միակողմանիություն, միտումնավորություն, ֆանատիկ կուրություն դեպի մահմեդական աշխարհը և այլն, մի հանգամանք, որը, անշուշտ, պայմանավորված էր նրանց դասակարգային պատկանելությամբ, հասարակական վիճակով և հատկապես քրիստոնեական տիրող գաղափարախոսության սահմանափակությամբ: Սակայն միանգամայն հասկանալի է, որ քննադատական վերաբերմունք ցուցաբերելու դեպքում կարելի է հիշատակարաններից վերցնել այն, ինչ որ իսկապես արժեքավոր է, հավաստի ու հետաքրքիր:

XVII դ. իրանում սկսված տնտեսական վերելքը դարավերջին և XVIII դ. սկզբին փոխարինվեց տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի անկումով: Երկրում ծայր առան համարյա չդադարող ֆեոդալական երկպառակություններ, շեշտակի անկում ապրեցին առևտուրը, արհեստները, մշակութային կյանքում սկսվեց երկարատև լճացում: XVIII դ. իրանի ընդհանուր անկումը բացասաբար անդրադարձավ նաև պատմագրության վրա: Թեև այդ հարյուրամյակում իրանական պատմագրությունը տվեց մեծ քանակությամբ գործեր, սակայն նրանց զգալի մասը նվիրված էր իրադարձությունների մակերեսային նկարագրությանը⁴²: Միանգամայն հասկանալի է, որ նման պայմաններում իրանի պատմության հարցերի գիտական լուսաբանման համար պետք է դիմել այլ ժողովուրդների պատմական գրավոր աղբյուրների օգնությանը, որոնց մեջ իրենց արժանավոր տեղն ունեն հայկական աղբյուրները: Հատկանշական է, որ այս դարաշրջանում հայ իրականության մեջ երևան են գալիս այնպիսի պատմական ստեղծագործություններ, որոնք ուղղակի նվիրված են իրանի պատմության հարցերին: Այդպիսի աղբյուրներից առաջին հերթին պետք է հիշատակել խաչատուր Զուղայեցու «Պատմություն պարսից» գործը⁴³:

⁴² Н. В. Пигулевская, А. Ю. Якубовский и др., История Ирана..., стр. 300.

⁴³ Խաչատուր աբեղա Զուղայեցի, Պատմութիւն Պարսից: Աշխատութեամբ Բաբգեն վարդ. Աղաւելեանց, Վաղարշապատ, 1905:

Այստեղ հիշինակը տալիս է պարսից թագավորների ժամանակադրութունը Կյուրոսից սկսած և հասցնում է մինչև իր ժամանակը՝ Քրիմ-խան Զենդի մահը (1779 թ.)։ իր գործը շարադրելիս նա օգտվել է հայ մատենադիրներից, զանազան քրոնիկոններից, գավազանագրերից և պարսկական աղբյուրներից, որի մասին հիշատակում է. «Կամեիով ես ըղձակերտ տենչանօք դիտել և հմտանալ նաև իսկ ի գրոց և ի մատենից սլարսից զորոշեալ ցեղս թագաւորաց նոցա։ Ուստի շոգայ առ գիտունս Պարսից՝ ...բերին առաջի իմ զմիծ մատեան մի կարի թաւարձի, որ իբրեւ ըստ դիտման եւ ըստ կարծեաց նոցա՝ էր Սոփեր Ճշմարտաճառ վիպագրութիւն որոց նախնեաց, եւ ստոյդ զրուցատրութիւն յառաջնոց»⁴⁴։

Խաչատուր Զուղայեցին իր այս սլատմությունը համարում է Ա հատոր, ի նկատի առնելով, որ պետք է գրի նաև Բ հատորը, որի մասին իր գրքի առաջաբանում ասում է. «Իսկ հատորն երկրորդ ունի յինքեան պարունակեալ զվէպս Պարսից եւ հեքատանցւոց աշխարհի, այսինքն Փարսըստանայ և Արաղստանայ, զոր ի մահու Քեարիմ իշխանի Պարսից սկսոց ուրոյն վիպել մի ըստ միոջէ շնորհիւ Տեառն՝ զմահայն անցս, զորս անցեալ փոթորկաբար պտուտկեցին ի կալուածս սահմանաց Պարսից աշխարհի, մինչեւ ուր ուրեք կամեցեալ հաճեցի Տէր յամբոկ արարեալ եզերեցից զկիր առնութիւնս իմ»։ Բայց դժբախտաբար Զուղայեցին չի հասցընում դրել իր գրքի երկրորդ հատորը։ Ամենայն հավանականությամբ դրա պատճառը անժամանակ մահն է, որը վրա է հասնում անհայտ է թե որ թվականին։

Իրանագիտության համար առանձնապես կարևոր արժեք է ներկայացնում Խաչատուր Զուղայեցու գրքի երկրորդ մասը, որը նվիրված է Քրիմ-խան Զենդի տիղապետության պատմությանը (1758—1779)։ Հեղինակը, իբրև ժամանակակից անձ, ճշգրիտ տեղեկութուններ է տալիս Իրանի այդ խառնակ շրջանի պատմության մասին։

Սեֆևյան դինաստիայի կործանման և Իրանում աֆղանական զավթիչների հաստատվելու պատմության փայլուն նկարագրությունը մենք գտնում ենք XVIII դ. նոր Զուղայեցի հայ հեղինակ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի օրագրում⁴⁵։ Նրա այս մեծարժեք

⁴⁴ Խ. Զուղայեցի, նշվ. աշխ., էջ 21—22։

⁴⁵ «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի», («Կոռնկ հայոց աշխարհին», 1863, Թիվ Ա) «Дневник осады Испагани Афганами, веденный Петросом ди Саркис Гиланенц в 1722 и 1723 гг., Материалы для истории Персии», пер. и объяснения К. Патканова, СПб., 1870.

գործը ընդհանուր ճանաչում է գտել որպես վերոհիշյալ իրադարձությունների վերաբերյալ փաստերի հարստության և հավաստիության փայլող մի աշխատություն:

XVIII դ. իրանի պատմության համար որոշակի արժեք է ներկայացնում նաև Աղվանքի կաթողիկոս Ծսայի Հասան Զալալյանի Աղվանից պատմությանը նվիրված աշխատությունը⁴⁶, որը հատկապես կարևոր նշանակություն ունի Իրանի տնտեսության և Սեֆեյան պետության քայքայման պատճառների լուսաբանման համար:

XVIII դ. իրանական պատմագրության մեջ թե իրենց արժեքով և թե քանակով առավել հարուստ ու մեծաթիվ են այն աղբյուրները, որոնք նվիրված են Նադիր շահի կառավարման և նրա արշավանքների պատմությանը: Դրանցից առավել արժեքավորներն են Միրզա Մուհամմեդ Մեհդի-խան Ասթերաբադիի «Թարիխ-ի Նադիրի», «Դուրր-ի Նադիրի» և Մուհամմեդ Քազիմի «Ալեմարայ-ի Նադիրի» գործերը: Սակայն դրանց կողքին չափազանց կարևոր արժեք են ներկայացնում նաև հայկական աղբյուրները, որոնց հաղորդած փաստերը իրենց հավաստիությամբ և բազմազանությամբ ոչ միայն համարժեք կարող են լինել իրանական աղբյուրներին, այլև որոշ դեպքերում նույնիսկ գերազանցել նրանց: Այդ աղբյուրներից առաջին հերթին հարկ է նշել Աբրահամ Կրետացու «Պատմագրությունը»⁴⁷: Այս աշխատությունում կան մեծ քանակությամբ տվյալներ, որոնք բնորոշում են Հայաստանի և իրանի XVIII դ. 30-ական թվականների իրադրությունը: Կրետացին մեկ առ մեկ թվարկում և նկարագրում է իրանի այն շրջանները, որոնք քայքայվել էին տնտեսական ճգնաժամի, թուրքական բռնագրավման և 30-ական թվականների սկզբի իրանա-թուրքական պատերազմի հետևանքով, զարմանալի բծախնդրությամբ նշում է որոշ գյուղատնտեսական մթերքների գները, բազմաթիվ փաստեր է

⁴⁶ Ծսայի Հասան Զալալյանց, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպիւոց յաշարհին Աղուանից, Ա տպագր., Շուշի, 1939, Բ տպագր., Երուսաղեմ, 1868. աշխատության ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս «Collections d'histoire Arméniens», t. II, St. Petersbourg, 1876.

⁴⁷ Աբրահամ կաթողիկոսի Կրետացու, Պատմագրութիւն անցիցն իւրոց և նատր-շահին պարսից: Ա հրատ., Կալկաթա, 1796, Բ հրատ., Վաղարշապատ, 1870, ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս M. Brosset, Abraham de Crete catholikos, histoire et celle de Nadir chah de Perse, «Collection d'historiens arméniens», t. II, S. P., 1876, pp. 259—483.

բերում կապված սովի, համաճարակների, տեղական իշխանությունների կամայականությունների և գյուղացիության ծանր վիճակի հետ։ Սոցիալ-տնտեսական բնույթի այս կարգի տեղեկություններից բացի մենք գտնում ենք հարուստ տվյալներ Նադիրի ֆեոդալական ղորքերի կաղմակերպման, թուրքերի և պարսիկների կողմից օգտագործվող զենքերի տեսակների մասին և այլն։

Ինչպես հայտնի է, Նադիր Ղուլի խանը, որը ձգտում էր ձեռք բերել հայ բարձր հոգևորականության և հարուստ վաճառականության աջակցությունը, հայ կաթողիկոսի նկատմամբ դրսևորում էր ուշադրության տարբեր նշաններ։ Այդ պատճառով Աբրահամ Կրետացին հրավիրվում է Մուզանի դաշտում գումարված համաժողովին (կուրուլթայ), որի մանրամասն նկարագրությունը տրվում է նրա աշխատության մեջ։ Կրետացու հաղորդած փաստերը պատմագրությանը հնարավորություն են տալիս լուսաբանելու այն կարևոր հարցը, թե Իրանի նոր տիրակալը տիրապետող դասակարգի նկատմամբ դեպի որ խավերն էր առավելապես կողմնորոշվում և նա ինչպիսի փոփոխություններ մտցրեց պետության մեջ բարձրագույն պաշտոններ բաշխելու բնագավառում։ Բացի այդ, մենք գտնում ենք բացառիկ արժեքավոր տեղեկություններ պարսից արքունական ծխակատարությունների, պարսկական վարչական ապարատում եղած բազմաթիվ պաշտոնների մասին և այլն։

Կրետացու հաղորդումը Նադիր շահի ընտրվելու մասին լրացնում և ճշտում է այն վարկածները, որոնք առաջ են քաշվում պարսիկ և արևմտաեվրոպական հեղինակների կողմից։

Նադիր շահի տիրապետության շրջանին նվիրված հայ պատմիչների գործերից հիշատակության արժանի են նաև Աբրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն»⁴⁸, Հակոբ Շամախեցու «Թահմազ-Ղուլի խանի արշավանքները և նրա շահ ընտրվելը»⁴⁹ աշխատությունները։

Որոշակի արժեք է ներկայացնում նաև պրոֆեսոր Ս. Տեր-Ավետիսյանի Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում

⁴⁸ Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Երևան, 1938։

⁴⁹ Այս աղբյուրը Երևանի Մատենադարանում հայտնաբերել է պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյանը, որը և ուսումնասիրությամբ հանդերձ առաջին անգամ հրատարակել է այն։ Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, Նադիր-շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940։ Ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել հետևյալ խորագրով. С. Тер-Аветисьян, Походы Тамас Кули хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тбилиси, 1932։

հայտնաբերած Աբրահամ Կրետացու ծոցի տետրակ-հիշատակա-րանը, որտեղ գտնում ենք Կրետացու տեսակցությունների նկարագրությունները Նադիր շահի հետ էջմիածնում:

Նադիր շահի տիրապետության պատմությունը վերահիշյալ գործերի հետ ամբողջացնում է հայատառ թուրքերեն մի աղբյուր, ուր նկարագրված է իրանի տիրակալի արշավանքները Աֆգանըստան, Հնդկաստան և նրա մահը: Այդ աղբյուրի հեղինակը իր ասելով «Օսմանլիի հպատակ հայերից է Թամպուրի քյուլյուկ Հարություն» անունով, որը Նադիր շահի մոտ գնացող թուրքական դեսպանության կազմում լինելով՝ ականատես է եղել իր նկարագրած դեպքերին: Թամպուրի Հարությունի այս պատմությունը 1800 թ. առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում՝ հայատառ-թուրքերենով⁵⁰:

XVIII դ. իրանի սոցիալ-տնտեսական կյանքի և քաղաքական իրադարձությունների ուսումնասիրության համար կարևոր աղբյուրներ են նաև Սիմեոն Երևանցու «Ջամբուր»⁵¹, Եղիա Կարնեցի Մուշեղյանի «Դիվանը»⁵², Վարդան Օձնեցու աշխատությունը պարսիկների 1795—1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքների մասին⁵³ և այլն:

XVIII դ. իրանի սոցիալ-տնտեսական, մասամբ նաև քաղաքական պատմության մասին առատ նյութ կա նաև հայկական

⁵⁰ «Դահմաս Գուլու Խտնըն Թէվարիֆի» նազըմիշ Հստամպուլու Թամպուրի Արութինդէն Օսմանը ելլիսի իլէ Եօլճուլուղնդա աճեմիստան Թարաֆլարրնաւ Որա ֆրանսերեն թարգմանությունը լույս է տեսել, «Bulletin de l'Institut Egyptien», tome III, Le Caire, année 1914, pp. 168—232.

Թարգմանությունը կատարել է Հակոբ Արթին փաշան, որն իր աշխատությանը կցել է մի ներածություն՝ հետևյալ վերնագրով. «Journal de Tambouri Aroutine sur le conguéte de l'inde par Nadir Schah (Tahmas Kouly Schah), 1735—1740. Սույն աշխատությունը հրատարակվել է նաև Երևանի պետ. համալսարանի գիտական նյութերի ժողովածուում», Երևան, 1941, էջ 100—123, Երևանի Մատենադարանում պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյանը հայտնաբերել է Քուլուկ Հարությունի աշխատության մի ձեռագիր, որը կոչվում է «Թահմասպ Կուլի խանի պատմությունը» (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6548):

⁵¹ Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբու, Վաղարշապատ, 1873, Ռուսերեն թարգմանությունը տե՛ս С.М.ОН Ереванцы, Джембур, М., 1958.

⁵² Եղիա Կարնեցու Դիվանը: Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության: Առաջաբանը և ժանդարմությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968:

⁵³ Տե՛ս Ռ. Տ. Տիտալյան, Վարդան Օձնեցիի պարսիկների 1795—1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի մասին, «Պատմա-բանասիրական հանգես», 1965, 3, էջ 211—222:

բազմաթիվ արխիվային փաստաթղթերում, որոնց մի մասը արդեն հրատարակվել է ու մտել գիտական շրջանառության մեջ⁵⁴։

Հարևան այդ երկրի քաղաքական իրադարձությունների նկատմամբ հայ գիտական շրջանների ակնառու հետաքրքրության վկայություն է նաև այն, որ դեռևս XVIII դ. մի շարք օտար լեզուներից հայերեն էին թարգմանվում եվրոպական արևելագետների ուսումնասիրությունները Նադիր շահի և նրա պետության, ինչպես նաև առհասարակ իրանի պատմության վերաբերյալ⁵⁵։

XVII—XVIII դարերում, երբ հայ առևտրական կապիտալը լայն գործառնություններ ուներ աշխարհի տարբեր երկրների հետ և հայ վաճառականները հանդես էին գալիս Արևելքի և Արևմուտքի միջև միջնորդ առևտրականների դերում, եվրոպական պետությունները աշխատում էին օգտվել նրանց հաղորդած տեղեկություններից՝ արևելյան երկրների մասին ճշգրիտ պատկերացումներ կազմելու համար։ Հայտնի է, օրինակ, որ Ռուսաստանի հետ աշխույժ առևտրական կապերի մեջ դտնվող իրանահայ վաճառականները ռուսական «Պոստուկի պրիկազին», որը կատարում էր արտաքին գործերի գործառնությունները, հարուստ տեղեկություններ էին հաղորդում իրանի, Հնդկաստանի, Հարավ-Արևելյան Ասիայի, Թուրքիայի, Լեանտի երկրների տնտեսության, առևտրի, քաղաքական իրավիճակի, տեղական բարքերի ու սովորությունների մասին և այլն⁵⁶։ Վ. Բարտոլդը բերում է ուշագրավ տեղեկություններ, որ դեպի Ասիա կատարած ռուսական ճանապարհորդությունների մեջ աչքի ընկնող տեղ են գրավել հայազգի առևտրականները, որոնց ուղևորությունները գրի էին առնվում ռուսական իշխանությունների կողմից և հրատարակվում տարբեր ամսագրերում⁵⁷։

Իրանի և առհասարակ Արևելքի երկրների մասին հայ ժողովրդի գիտական պատկերացումների ձևավորմանը զգալիորեն նպաստել է նաև եվրոպական մի շարք կենտրոններում հայերեն գրքերի տպագրությունը։ Հայ իրանագիտության զարգացման բնա-

⁵⁴ Տե՛ս «Կավպածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», Երևան, 1941։

⁵⁵ Տե՛ս Հանուէ, Պատմագրութիւն վարուցն և գործոց Նադիր Շահ թագաւորի պարսից, Մադրաս, 1780։

⁵⁶ Տե՛ս «Армяно-русские отношения в XVII веке», сборник документов, Ереван, 1953; «Русско-индийские отношения в XVII в.», сборник документов, М., 1958.

⁵⁷ В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России, СПб., 1911, стр. 227—228.

գավառում որոշակի դեր են խաղացել նաև Իրանի հայկական մեծ ու փոքր գաղթօջախները, որտեղ դարերի ընթացքում կուտակվել է մեծ քանակությամբ փաստական նյութ:

Այսպիսով, արժեքավորելով հայկական աղբյուրների դերն ու նշանակությունը Իրանի պատմության տարբեր շրջանների հարցերը լուսաբանելու տեսակետից, պետք է նշել, որ դրանք իսկապես ունեն բացառիկ կարևոր նշանակություն: Այդ բանը խոստովանում են ինչպես եվրոպացի, այնպես էլ պարսիկ գիտնականները, որոնք XIX դ. սկսած ոչ միայն սեեռուն հետաքրքրություն են դրսևորել այդ աղբյուրների նկատմամբ, այլև սկսել են ուսումնասիրել դրանք: Ժամանակակից ականավոր պարսիկ բանասեր և պատմաբան Սայիդ Նաֆիսիի կարծիքով, առանց հայկական աղբյուրների դժվար է ամբողջապես վերականգնել Իրանի հնագույն և միջնադարյան պատմությունը: Նա նույնիսկ հանգում է այն եզրակացության, որ առանց հայկական աղբյուրների հնարավոր չէ դրել Իրանի ամբողջական պատմությունը:

Օտարազգի գիտնականների այդչափ մեծ հետաքրքրությունը հայկական աղբյուրների նկատմամբ պայմանավորված չէր լոկ նրանցում եղած հարուստ տվյալներով: Ամբողջ հարցը նրանումն է, որ հայկական աղբյուրների արժեքը ոչ միայն Արևելքի երկրների պատմության առանձին հարցերի մասին եզակիության մեջ է, այլև, թերևս, առաջին հերթին փաստերի հավաստիության: Գիտա-համեմատական փորձաքննակով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները գիտնականներին բերեցին այն համոզման, որ հայկական աղբյուրների ճնշող մեծամասնությունը արժանահավատ է և միանգամայն վստահելի:

* * *

Հայ գիտական արևելագիտության, մասնավորապես իրանագիտության հիմնադիր կարելի է համարել Գևորգ Տեր-Հովհաննիսյանին (Գևորգ Դպիր Պալատեցի, 1737—1812 թթ.): Նա թողել է գրական մի հարուստ ժառանգություն, որը եզակի տեղ ունի հայ արևելագիտության պատմության մեջ: Գևորգ Դպիրի աշխատություններից գիտական առավել մեծ արժեք է ներկայացնում նրա պարսկերեն-հայերեն բառարանը⁵⁸, որը առաջին այդօրինակ րա-

⁵⁸ Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից: Յորում ճոխաբար աւսնդվին իմաստք բառիցն՝ Հայերէն և Տաճկերէն բացատրութեամբ և ուրեք արաբական նշանակութեամբ: Յաւելեալ և զյատուկ անուանս նշանաւոր

թյունը նրանումն է, որ այնտեղ բազմապիսի տեղեկություններ են տրվում իրանական դիցաբանության, առասպելների, ժողովրդական ասացվածքների ու առածների, վիպական հերոսների մասին և այլն, Բառարանի արժեքը մեծանում է նաև նրանով, որ յուրաքանչյուր բառահոգվածի համար տրված են մի քանի իմաստներ: Բացի այդ, հայատառ պարսկերենով բերվում են բազմաթիվ օրինակներ իրանական դասական բանաստեղծներից, որով բառարանը էլ ավելի է հարստանում և արժեքավորվում որպես պարսից բանաստեղծների ստեղծագործությունների առանձին նմուշների, հաճախ առաջին, հայերեն թարգմանությունների հավաքածու, մի բան, որ իր նմանը և նախատիպը չի ունեցել մեր գրականության մեջ⁵⁹: Այսպես, բառարանում մենք հանդիպում ենք Սաադիի ստեղծագործությունների ամենավաղ թարգմանություններ⁶⁰:

Գևորգ Դպիրը կազմել է նաև պարսկերեն և արաբերեն լեզուներով դասագրքեր, գրել է պարսկերեն լեզվի քերականություն, մի շարք պատմական ուսումնասիրություններ և այլն: Նա ծավալել է նաև թարգմանական բուռն գործունեություն: Պարսկերենից թարգմանել է Հուսեյն Թուսի որդու «Ականց գիրք» անունով մի աշխատություն⁶¹, որը գաղափար է տալիս Իրանում հնագույն շափերի, կշիռների, թանկագին քարերի, դրամների մասին և այլն: Նա թարգմանել է նաև XV դ. պարսիկ աստղագետ ու տոմարագետ Աբդու-Ազիզ իբն Աբդուլոհահման Թաբրիզիի «Բանալի աստեղաց» գործը⁶²:

Թագաւորաց և զերեւելի տեղեաց և ճոխացուցեալ օրինակօք ի բանաստեղծից Պարսից, Ի Գէորգեայ դպրէ Տէր-Հովհաննիսյան Պալատացւոյ աշխատութեամբ և ուղղագրելով և համառօտ քերականութեամբ ի Յակոբայ Տիւզեան, Ի. Կ. Պոլիս, 1826:

⁵⁹ Բ. Լ. Չուգասյան, Հայ-իրանական գրական առնչություններ, էջ 52:

⁶⁰ Ա. Մ. Մինասյան, Սաադիի «Գուլեսթանը» և նրա թարգմանությունները հայերեն, Առանձնատիպ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ. (1963, № 1, էջ 38):

⁶¹ Գիրք մեծագին և պատուական ականց, և այլոց պէսպէս հանքական և կենդանական քարանց նաև եօթանց հրահալելեաց և զանազան աղետազոյն իրաց, Շարադրեալ ի պարսից լեզուն, և թարգմանեալ ի հայ բարբառ, աշխատութեամբ Գէորգայ ուրումն մշականուն դպրի..., Կոստանդնուպոլիս, 1779:

⁶² Գևորգ Պալատացու այս անտիպ գործը պահպանվում է էջմիածնի վանքի այժմյան գրադարանում (ձեռ. № 3, էջ 1ա—60բ) տե՛ս Հ. Ս. Անապայան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հ. 1, Երևան, 1959, էջ 46—47:

Այսպիսով, XVIII դ. վերջին Գևորգ Դպիր Տեր-Հովհաննիսյանը ըստ էության սկիզբ է դնում հայ նոր իրանագիտությանը, որ անօրինակ զարգացում ապրեց հաջորդ XIX դարում: Նշված դարաշրջանում, երբ եվրոպական արևելագիտությունը, այդ թվում նաև իրանագիտությունը, ապրում էր աննախընթաց վերելք, հայ իրանագիտությունը այդ ընդհանուր վերելքին համահնչյուն, նախկինում կուտակված հարուստ փաստերի հիման վրա հրապարակ հանեց մի շարք մեծարժեք գործեր, որոնք զգալի ավանդ հանդիսացան իրանի պատմության, գրականության և մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

Հայ իրանագիտության զարգացման համար խթան հանդիսացավ նաև հայագիտության մինչ այդ շտեմնված զարգացումը: Այդ պայմանավորված էր նրանով, որ հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված էր Հայաստանի դարավոր հարևան իրանի պատմության հետ և հետևաբար այս երկու երկրների պատմական կյանքի տարրեր փոփոխորդ ուսումնասիրելիս, դրանք անհրաժեշտ էր վերցնել իրենց փոխկապակցության մեջ: Պատահական չէ, որ XIX դ. համաշխարհային արևելագիտության զարգացման հետեւվանքով մեծացավ նաև եվրոպական արևելագետների հետաքրքրությունը ինչպես հայ ժողովրդի պատմության, այնպես էլ հայկական աղբյուրների նկատմամբ: Այդ առթիվ վ. Ռարտոլըզը գրում է. «XIX դ. սկզբին եվրոպական գիտնականները հետաքրքրվում էին գլխավորապես հայկական պատմական գրականությամբ, որտեղ հույս ունեին գտնել նոր նյութ Առաջավոր Ասիայի պատմության վերաբերյալ»⁶³:

Հայաստանի հարևան երկրների պատմության և մշակույթի գիտական ուսումնասիրությամբ առաջինը զբաղվեցին հայ լուսավորիչները: Խ. Աբովյանը՝ իր «Դորպատյան օրագրերում» և մի շարք այլ աշխատություններում հետաքրքիր դիտողություններ է անում իրանի պատմության մի շարք հարցերի մասին:

XIX դ. առաջին հայ իրանագետներից է վաստակաշատ գիտնական, լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանը (1803—1858 թթ.), որի թողած արևելագիտական ժառանգությունը կարևոր տեղ է գրավում XIX դ. առաջին կեսի հայ գիտական, հասարակական մտքի և ազգային մշակույթի զարգացման մեջ: Որպես արևելագետ Մ. Թաղիադյանին առավելապես հետաքրքրել է իրանի և Հնդկաստանի պատմությունը և մշակույթը: Նրա «Պատմություն պարսից»

⁶³ В. В. Бартольд, История изучения..., стр. 291.

աշխատությունը⁶⁴ հայ իրականության մեջ իրանի պատմության քննական ուսումնասիրության առաջին փորձն է։ Այս ժամալուն աշխատությունը ընդգրկում է իրանի պատմության առասպելական շրջանից մինչև նոր ժամանակներն ընկած հատվածը։ Հեղինակը լայնորեն օգտագործում է հունական պատմիչների, անտիկ պատմագիրների ու ճանապարհորդների տեղեկությունները, ինչպես նաև հայ պատմիչներին, եվրոպական պատմագիրներին, ճանապարհորդներին, միսիոներներին և այլն։ Լինելով պարսկերեն լեզվի քաջ գիտակ, Մ. Թաղիադյանը օգտագործել է նաև պարսկական աղբյուրներ, հատկապես Թաբարիի «Պատմությունը» և «Զիննաթուլ-թավարիխը»։ Բացի իր ձեռքի տակ եղած աղբյուրներից, նա իր աշխատությունում շրջանառության մեջ է դնում նաև իր անձնական դիտումները, որոնք շատ հաճախ փայլում են խորը ընդհանրացումներով։ Ամենայն հավանականությամբ, հեղինակը մտադիր է եղել շարունակել իր երկը և հրատարակել Բ հատորը ևս, սակայն նրա մտադրությունը անկատար է մնացել։

Մի այլ գործում՝ «Պարսկական ճանապարհորդության հուշագրերում»⁶⁵ Մ. Թաղիադյանը վերին աստիճանի ինքնատիպ ու ուշադրավ դիտողություններ է անում պարսկական դիցաբանության մասին, փորձում է խորամուխ լինել իրանի հասարակական, քաղաքական, ազգագրական և մշակութային մի շարք հարցերի մեջ։

Մ. Թաղիադյանին հավասարապես հետաքրքրել է նաև իրանի մշակույթը, հատկապես ժողովրդական բանահյուսությունը։ Նա հավաքել և հայերեն լեզվով հրատարակել է պարսկական ժողովրդական առածները և ասացվածքները⁶⁶։

Լուսավորական դարաշրջանի գաղափարների և 1847—1848 թթ. Նվրոպայում բարձրացող հեղափոխական շարժումների ազդեցության տակ Մ. Թաղիադյանը իր արևելագիտական ուսումնասիրություններում աշխատում է խորամուխ լինել իր ժամանակի պատմական կյանքի նոր երևույթների մեջ։ Նա քննադատության

⁶⁴ Մեսրոպ Թաղիադյան, Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846։

⁶⁵ «Ճանապարհորդութիւն Մ. Դ. Թաղիադեանց ի Պարսկաստան», հտ. Բ, Կալկաթա, 1848։

⁶⁶ «Զուարճախօս առակք Պարսից»։ Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք. Թարգմ. Մ. Դ. Թաղիադեանց, Կալկաթայ, 1846։ Այս աշխատության լրիվ տեքստը տե՛ս նաև Մ. Թաղիադյան, Գեղարվեստական երկեր, էջ 394—423։ Սույն ժողովածուի երկրորդ հատորը ձեռագիր վիճակում պահվում է նոր Զուղայի վանքում. տե՛ս Գ. Միրզաբեկյան, Մ. Թաղիադյանի ժառանգության առթիվ (Առանձնատիպ, ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագրից» 1963, № 3, էջ 90)։

է ենթարկում եվրոպական պետութիւններին, մասնավորապես Անգլիայի գաղութային քաղաքականութիւնը Մերձավոր և Միջին Արեւելքում և ի վերջո հանգում է այն եզրակացութեան, որ «Կենսագործ նորոգութեան պէտք ունի աշխարհն գրեթե յամենայն ուրեք»⁶⁷։

XIX դ. հայ իրանագիտութեան զարգացման համար կարևորագույն կենտրոն էր Ռուսաստանը։ Ռուս արեւելագիտութիւնը արդեն դարի առաջին կեսին գտնվում էր համաշխարհային արեւելագիտութեան առաջին շարքերում։ Ռուսական արեւելագիտութեան առավել էական և նշանակալից գիծն էր հարցերի ընդգրկման խորութիւնը, որը ի դեպ բնորոշ չէր նրան ժամանակակից արևմտա-եվրոպական բուրժուական արեւելագիտութեանը։

Դարի սկզբին, երբ ցարիզմը անօրինակ կերպով ակտիվացրեց իր արեւելյան քաղաքականութիւնը, Արեւելքի և արեւելագիտութեան նկատմամբ ռուսական հասարակութեան տարբեր շրջանների հետաքրքրութիւնը անզուսպ կերպով մեծանում էր⁶⁸։ Այդ շարժումը չէր կարող չհամակել նաև Ռուսաստանի կուլտուրական-գիտական կենտրոններում գործող հայ մտավորականութեանը։ Հայագիտութիւնը իրենց գործունեութեան բնագավառ դարձրած բազմաթիւ դեմքեր միաժամանակ սկսում են ավել կամ պակաս չափով զբաղվել նաև իրանագիտութեամբ, թուրքագիտութեամբ և այլն։ Միաժամանակ երևան են գալիս մարդիկ, որոնք բացառապես զբաղվում են արեւելագիտութեան տարբեր հարցերով։

Պետք է նշել, որ հայ իրանագիտութիւնը հենց սկզբից ժառանգեց ռուսական արեւելագիտութեան լավագույն ավանդույթները։

Հայ արեւելագիտութեան զարգացման գործում բացառիկ կարեւոր դեր է սկսում խաղալ 1815 թ. Մոսկվայում բացված Լազարյան Ճեմարանը, որի կատարած դերը անգնահատելի է նաև ռուս արեւելագիտութեան զարգացման գործում։ Հիրավի, այս դիտական և ուսումնական հաստատութիւնը հանդիսացել է alma mater հայ արեւելագետների մի քանի սերնդի համար։

Ռուսական արեւելագիտութեան հետ հայ գիտնականների կապերի սերտացմանը մեծապես նպաստեց 1828 թ. Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Հայ ժողովրդի պատմական

⁶⁷ «Ազգասեր Արարտեան», 1850, հ. Բ, էջ 424։

⁶⁸ А. Базилянц, Н. Кузнецова, Л. Кулагина, Азиатский музей—Институт востоковедения АН СССР, 1918—1968, М., 1969, стр. 15.

ճակատագրում աւգ իրադարձութիւնը ունեցաւ քաղաքական-կուլտուրական խոշոր նշանակութիւն: Բացի այն, որ հայ ժողովրդի համար բացվեց խաղաղ առաջադիմութեան մի նոր դարագլուխ, նա այսուհետև հնարավորութիւն էր ստանում անմիջական շփման մեջ մտնել ոուս առաջավոր գիտութեան ու մշակույթի և նրա միջոցով նաև համաշխարհային կուլտուրական արժեքներին հետ:

XIX դ. տվեց հայ իրանագիտութեան այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք են՝ Ստեփանոս Նազարյանը, Քերովքե Պատկանյանը, Կարապետ Եզյանը, Գրիգոր Խալաթյանը, Մկրտիչ Էմինը և ուրիշներ, որոնց գործերը արդեն կրում էին ոչ թե նկարագրական, այլ քննական բնույթ:

Այստեղ ավելորդ չէ համառոտակի կանգ առնել նրանց իրանագիտական ժառանգութեան վրա:

XIX դ. 40-ական թվականներին Ստեփանոս Նազարյանը (1814—1879) գլխավորում էր ոուս արևելագիտութեան խոշորագույն կենտրոններից մեկի՝ Կազանի համալսարանի արևելագիտութեան ամբիոնը: Այստեղ և Մոսկվայի կազարյան ճեմարանի արեւելյան լեզուների պրոֆեսորի պաշտոնում պաշտոնավարելիս Ս. Նազարյանը մեծ աշխատանք է կատարում ոուս արևելագիտութեան համար կադրեր պատրաստելու գործում:

Իր բազմամյա գործունեութեան ընթացքում նա ուսումնասիրում և հրապարակում է մի շարք իրանագիտական գործեր, որոնցից հիշատակութեան արժանի են հայ-պարսկական դպրութեան մագիստրոսի աստիճան ստանալու համար նրա դիսերտացիան⁶⁹, Ֆիրդուսի «Շահնամին» նվիրված դոկտորական դիսերտացիան⁷⁰, Սադիի «Գոլեսթանի» վերաբերյալ աշխատութիւնը և այլն⁷¹:

⁶⁹ «Обозрение истории Гайканской письменности в новейшие времена». Рассуждение, писанное для приобретения степени магистра армяно-персидской словесности кандидатом философии Степаном Назарянцем, Казань, 1846.

⁷⁰ «Абуль-Касем Фердауси Тусский, творец книги царей, известной под названием Шах-намэ. С присовокуплением краткого обзора истории персидской поэзии до исхода XV столетия по Р. Х.», сочинение доктора Восточной словесности Степана Назарянца, кн. I, Казань, 1849; кн. II, М., 1851.

⁷¹ «Розовый кустарник шейха Муслехеддина Саади Ширазского, славный под названием Гулистана». Пер. с персидского С. Назарянца, доктора Восточной словесности, М., 1857.

իրանագիտության բնագավառում Ս. Նազարյանի տեսակետները աչքի են ընկնում իրենց առաջադիմական գաղափարներով և գիտնականի խորը ընդհանրացումներով: Հակադրվելով եվրոպացիներին ստական բուրժուական տեսակետներին Ս. Նազարյանը գտնում է, որ համաշխարհային պատմությունը չի կարող անտեսել եվրոպական աշխարհից դուրս գտնվող ազդերը:

Ֆիրդուսու «Շահնամին» նվիրված իր ուսումնասիրությամբ Ս. Նազարյանը հիմք դրեց հայ գիտական ֆիրդուսիադիտությանը: Այդ աշխատությունը խոշոր ավանդ էր նաև ռուսական իրանագիտության բնագավառում: Ըստ էության, այդ առաջին գործն էր, որը ռուսական գիտական շրջաններին ծանոթացնում էր Ֆիրդուսու ստեղծագործության հետ և երկար ժամանակ այն մնում էր որպես պարսիկ բանաստեղծի ստեղծագործության մասին լավագույն ուսումնասիրությունը⁷²:

Ս. Նազարյանը ռուսական իրականության մեջ եղել է պարսից դասական պոեզիայի առաջին պրոպագանդիստը: Բավական է ասել, որ Սաադիի «Գուլիսթանի» առաջին ռուսերեն թարգմանությունը ևս պատկանում է Ս. Նազարյանին: Այս գործի վրա հեղինակը աշխատել է երկար, ուսումնասիրելով պարսկերեն բնագիրը և նրան վերաբերող բացատրությունները թուրքերեն լեզվով: Բոլոր ձեռագրերից նա ընտրել է լավագույնը, այսպես կոչված «Թավրիդի քոլլիաթը», որը և հնարավորություն է տվել նրան հարազատ ու մոտիկ մնալ բուն տեքստին:

Իր հրատարակած «Հյուսիսափայլում» ևս Ս. Նազարյանը պարբերաբար հրատարակում էր հոդվածներ պարսից դասական բանաստեղծներ Զամիի, Սաադիի, Ռումիի և այլոց ստեղծագործություններից:

Հայ իրանագիտության բնագավառում որոշակի ծառայություններ ունի անվանի հայագետ-արևելագետ Մկրտիչ էմինը (1815—1890): Նվիրելով իրեն գլխավորապես հայագիտության զարգացմանը, նա իր մի շարք պատմա-բանասիրական աշխատություններում, առավելապես հայ գրականության ու պատմու-

⁷² Այդ աշխատության մասին իր ժամանակի ռուսական գիտական հանդեսներում եղան մի շարք ելույթներ, որոնցում բարձր գնահատական էր տրվում Ս. Նազարյանի ուսումնասիրությանը: Տե՛ս օրինակ՝ «Московитянин», ч. VI, 1851, стр. 169—174; «Журнал министерства народного просвещения», 1852, т. 73, стр. 148—153; «Отечественные записки», 1851, т. 76, отд. VI, стр. 24—25; «Современник», 1851, т. 80, стр. 48—51 և այլն:

թիւն հին շրջանին նվիրված գործերում, քննության է ենթարկել րազմաթիվ հարցեր, որոնք առնչվում են նաև իրանի հին շրջանի պատմության և մշակույթի խնդիրներին: Այսպես, «Վէպք հնույն Հայաստանի»⁷³ ուսումնասիրության մեջ Մ. էմինը լեզվա-համեմատական խորը վերլուծության է ենթարկել Մ. Խորենացու «Հայոց պատմության», «Ի պարսից առասպելաց» և Ֆիրդուսու «Շահնամի», «Զոհակ» բաժինները: Զուգահեռներ անցկացնելով նրանց միջև, հեղինակը հանգել է գիտական մի շարք լուրջ եզրակացությունների⁷⁴:

70—90-ական թվականներին Մ. էմինի հրատարակած հայագիտական գործերում⁷⁵ ևս հանդիպում ենք երբեմն շատ հակիրճ, բայց և վերին աստիճանի հետաքրքիր դիտողությունների հին իրանի պատմության և մշակույթի հարցերի մասին: Դրանցում Մ. էմինը պատմա-համեմատական լայն զուգահեռներ է անցկացնում երկու հարևան ժողովուրդների պատմական կյանքի տարբեր դրվագների միջև:

Իրանագիտական կարևոր արժեք է ներկայացնում հատկապես Մ. էմինի «Մեդացիք հին Հայաստանում» հոդվածը⁷⁶, Այստեղ նա հատկապես կանգ առնելով ֆրանսիացի արևելագետ Ժյուլ Օպպերտի «Աժդահակ» բառի մեկնաբանության վրա, վերլուծության է ենթարկում մեդացիների հետ հայերի ունեցած առնչությունները և հոգևոր-մշակութային փոխազդեցությունները: Հեղինակը քննության է ենթարկում նաև Հայաստանում մարերի գաղութի պատմությունը և ցույց է տալիս, որ մարերի մասին Մ. Խորենացու հաղորդած տեղեկությունները միանգամայն արժանահավատ են և ունեն պատմական հիմք:

XIX դ. հայ իրանագիտության խոշոր երախտավորներից է նաև ականավոր հայագետ-արևելագետ Քերովբե Պատկանյանը (1833—1889), որի «Փորձ սասանյան հարստության պատմության՝

⁷³ Մ. էմին, Վէպք հնույն Հայաստանի, Մոսկվա, 1850:

⁷⁴ Մանրամասն տե՛ս Ավ. Շահապարյան, Շահնամեն և հայկական աղբյուրները, Երևան, 1967, էջ 5:

⁷⁵ Տե՛ս «Вахаги-Вишапаках армянской мифологии есть Индра Вридрахан Ригведы», М., 1873; «Моисей Хоренац и древний эпос армянский», М., 1881; «Династический список Хайхидов», М., 1884; «Исследования и статьи по армянской мифологии, археологии, истории и истории мифологии», М., 1896.

⁷⁶ Մ. էմին, Մեդացիք Հին Հայաստանում: Ժյուլ Օպպերտի տված նոր մեկնությունը «Աժդահակ» բառին («Փորձ», 1881, № 5—6, 199—210:

ըստ հայկական աղբյուրների» աշխատությունը⁷⁷ մեծ ընդունելություն գտավ Ռուսաստանի արևելագիտական շրջաններում և նրա հեղինակը ձեռք բերեց անվանի արևելագետ-իրանագետի անուն։ Նրա աշխատությունը անմիջապես իր վրա բեռեց նաև եվրոպական արևելագիտության ուշադրությունը և այն հետագայում լույս տեսավ նաև ֆրանսերեն լեզվով։ Ք. Պատկանյանը եվրոպական արևելագիտությանն էր ներկայացնում ոչ միայն քննական մի ուսումնասիրություն Սասանյան իրանի պատմության մասին, այլ նրանց առջև բաց էր անում Սասանյանների պատմության վերաբերյալ հետաքրքիր ու եվրոպացիների համար մինչ այդ անհայտ աղբյուրների մի հարուստ գանձ՝ միջնադարի հայկական սկզբնաղբյուրները։

Դեռևս մինչ այդ աշխատության հրատարակումը (որը, ի դեպ, Ք. Պատկանյանի մագիստրոսական դիսերտացիան էր), հեղինակը եվրոպական իրանագետներին արդեն ծանոթ էր որպես հայկական աղբյուրների քաջ գիտակ ու հմուտ մասնագետ։ Նա 1860 թ. շրջագայել էր եվրոպայում, մասնավորապես եղել էր Վենետիկում, Մյունխենում, Փարիզում և Վիեննայում, որտեղ հավաքել էր մեծ քանակությամբ հայերեն ձեռագրեր և ծանոթացել Արևմուտքի անվանի հայագետների ու արևելագետների հետ։ Գիտական այդ ուղևորության արդյունքը հանդիսացավ ֆրանսերեն լեզվով նրա հրատարակած հայկական աղբյուրների կատալոգը⁷⁸, որով Ք. Պատկանյանը գիտական աշխարհին ծանոթացնում էր հայ հին գրականության հետ։ Հետագայում ևս շարունակելով այս ուղղությամբ իր աշխատանքները, նա հրատարակում է մի շարք գործեր⁷⁹, որոնք եվրոպական արևելագիտությանը և հայագիտությանը տրամադրում էին նոր և խիստ ուշագրավ ու արժեքավոր նյութեր։ Առհասարակ պետք է նշել, որ Ք. Պատկանյանի պատմագիտական աշխատանքների մեջ կարևոր տեղ է գրավում հայկական սկզբնաղբյուրների հրատարակումը և դրանց ուսերեն թարգմանությունը։

1870 թ. մեծավաստակ իրանագետը ուսերեն լեզվով հրատարակում է Պետրոս դի Սարգիս Գիլանենցի օրագիրը⁸⁰, որը, ինչպես արդեն նշվել է վերևում, կարելի է համարել 1722 թ. աֆղան-

⁷⁷ «Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями», СПб., 1863.

⁷⁸ «Catalogue de la Literature Armentienne depuis le commencement du II siecle jusque vers le milieu du XIII., 1860.

⁷⁹ Տե՛ս «Նշխարք մատենագրության հայոց» Ս. Պետերբուրգ, 1884:

⁸⁰ «Дневник осады Испагани Афганями...».

ների կողմից սեֆեհների մայրաքաղաք Սպահանի պաշարման և նրա անկման վերաբերյալ ամենալավագույն սկզբնաղբյուրը:

Իրանի պատմությունը նվիրված Ք. Պատկանյանի աշխատություններից հարցերի ընդգրկման խորությամբ և փաստերի հարստությամբ հատկապես աչքի է ընկնում «Ընդհանուր ակնարկ Պարսկաստանի պատմության մինչև արաբների ներխուժումը» ուսումնասիրությունը⁸¹։ Գտնվելով բուրժուական պատմագրության դիրքերի վրա, հեղինակը չի կարողանում բացահայտել Սասանյանների տիրապետության շրջանում իրանում գոյություն ունեցող սոցիալ-դոստակարգային հարաբերությունները և մի շարք հարցերի մեկնաբանության բնագավառում հանգում է ոչ ճիշտ եզրակացությունների, սակայն նրա աշխատության փաստական հարուստ նյութը այսօր էլ շահեկան ու օգտավետ է դարձնում նրա գործը:

Արժեքավորելով Ք. Պատկանյանի իրանագիտության բնագավառում ունեցած ծառայությունները, պետք է նշել, որ նա դրեց հայ նոր կամ դիտական արևելագիտության և հատկապես իրանագիտության կայուն հիմքերը⁸²։ Անվերապահորեն նրան կարելի է համարել նաև XIX դ. հայ ամենախոշոր իրանագետը:

1884 թ. վաստակաշատ հայագետ-արևելագետը ընտրվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, որի կազմում ցարական Ռուսաստանի պալմաններում տեղ ունեին ազգային փոքրամասնություններից չնչին թվով ներկայացուցիչներ:

Չափազանց մեծ է եղել Ք. Պատկանյանի երախտիքը նաև Ռուսաստանում արևելագետ-իրանագետ կադրերի պատրաստման գործում: Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում տարիներ շարունակ նա կարդացել է իրանի պատմության դասընթացը, որը չափազանց բարձր են գնահատել իր ժամանակի արևելագետները: Վ. Բարտոլդը այդ առթիվ գրում է. «Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում Պատկանովի մահից հետո բավականին տևական ժամանակ Պարսկաստանի պատմության դասընթացի ընթերցումը դադարեց»⁸³։ Միայն 1901 թ. Վ.

⁸¹ К. Патканов, Общий обзор истории Персии до вторжения арабов, СПб., 1883—1884.

⁸² См. Н. О. Эмин, Профессор Патканов как ориенталист, Вена, 1874.

⁸³ Б. М. Данциг, Изучение Ближнего Востока в России (XIX—начало XX вв.), М., 1968, стр. 112.

Բարտուղիին հանձնարարվում է կարգալ «Իրանի պատմա-աշխարհագրական տեսություն» դասընթացը⁸⁴։

Իրանագիտության բնագավառում նշանակալից երևույթ էր Կարապետ Եզյանի (էզով 1835—1905) «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ»⁸⁵ մեծածավալ աշխատության հրատարակումը, որը ոչ միայն կարևոր ներդրում էր հայ-ռուսական հարաբերությունները ուսումնասիրելու, այլև XVII—XVIII դարերի ռուս-պարսկական քաղաքական հարաբերությունները բացահայտելու տեսակետից։ Այս հետազոտության կարևոր արժանիքներից մեկը այն է, որ նա գրված է ռուսական և արևմտահայկական արխիվային հարուստ նյութերի և գրականության հիման վրա և հետևաբար քննարկվող հարցի մասին տալիս է բազմաբովանդակ և հարուստ նյութ։ Իրանագիտական առումով այստեղ արժեքավորն ու գնահատելին այն է, որ հեղինակը հանգամանորեն կանգ է առնում Սեֆեյան պետության ներքին և արտաքին քաղաքականության հարցերի վրա (շահ Աբբաս I-ից սկսած մինչև սեֆեյան վերջին շահ Սուլթան Հուսեյնի տիրապետությունը), մանրամասնորեն խոսում է XVII դ. թուրք-իրանական պատերազմների մասին և հատուկ կանգ է առնում Մերձավոր և Միջին Արևելքում, հատկապես Իրանում, արևմտահայկական պետությունների քաղաքականության վրա։ Սակայն առավել բազմակողմանիորեն և խորը բացահայտվում են Պետրոս I-ի արևելյան քաղաքականությունը և ռուս-պարսկական հարաբերությունները։ Նշված հարցերի քննության տեսակետից Կ. Եզյանի գիրքը խոշոր ավանդ էր ոչ միայն ռուս արևելագիտության, այլև համաշխարհային իրանագիտության բնագավառում։ Պատահական չէ, որ նրա հրատարակումից հետո այն մտավ գիտական լայն շրջանառության մեջ և երկար ժամանակ օգտագործվում էր որպես ռուս-պարսկական հարաբերությունների վերաբերյալ ամենալավագույն գործերից մեկը։ Չնայած, որ այս աշխատությունը տառապում է բուրժուական պատմագրությանը բնորոշ թերություններով, սակայն այն իր արժեքը չի կորցրել նաև մեր օրերում։

Երկար տարիներ պաշտոնավարելով Ռուսական կայսրության հանրային կրթության մինիստրությունում և վարելով ղեկավար աշխատանքներ, Կ. Եզյանը մեծապես նպաստել է ռուսական ընթերցանությանը։

⁸⁴ Նույն տեղում։

⁸⁵ К. Эзов, Сношение Петра Великого с армянским народом, СПб., 1898.

րագուլն ուսումնական հաստատություններում արևելագիտության զարդացմանը⁸⁵։ Միաժամանակ նա ակտիվ մասնակցություն է ունեցել Ռուսաստանի արևելագիտական կյանքին։ Մի շարք միջազգային արևելագիտական համաժողովներում Կ. Նզյանը ներկայացրել է ռուսական կառավարությանը՝ տալով արժեքավոր զեկուցումներ։

Անվանի հայագետ-արևելագետ Գրիգոր հալաթյանը (1858—1912), որն անցել էր Լազարյան ճեմարանի դարբնոցով և ապա ավարտել Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, իր հայագիտական աշխատություններում մեծ տեղ է հատկացնում նաև իրանի պատմության և հայ-իրանական հարաբերությունների մի շարք հարցերին։ Այսպես, «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ»⁸⁷ աշխատությունում Գ. հալաթյանը համակողմանի քննության է ենթարկում այն հարցը, թե որքանով են իրանի դյուցազնական ավանդությունները ազդեցություն գործել հայ ժողովրդական վեպի վրա և որքանով են հայերը փոխառել իրանական գրույցները։ Այդ նպատակով նա վերցնում է հայկական մի շարք գավառների բանահյուսությունը (Ապարան, Կողբ, Վան) և գիտական ուշագրավ վերլուծության շնորհիվ ցույց է տալիս իրանական էպոսի ազդեցությունը վերոհիշյալ շրջանների բանահյուսության վրա։

Խոսելով հայ-իրանական գրական մշակութային կապերի և փոխազդեցությունների մասին Գ. հալաթյանը գրում է. «...Պարսից դարավոր հարեանությունն ավելի ևս խորը դրոշմվեց հայ ազգի կյանքի վրա. նա զգալի է նախ լեզվում, թե՛ գրաբարում և, թե՛ առավել ևս աշխարհաբարում։ Մյուս կողմից, Արևելքն՝ Պարսից շնորհիվ՝ բաց էր անում հայերի առջև իր խորհրդավոր պարտեզի դռները և ներս հրավիրում հնգիաթների աշխարհն, ուր մարդկային երևակայությունն այնպես հրաշալի կերպով ծաղկեց արևելյան ճոխ բնության գրկում։ Իրանի հուշակավոր հերոսների ավանդություններն... հեշտիվ կարող էին հրապուրել հայերին՝ Պարսից ամենամոտ դրացիների երևակայությունը»⁸⁸։

Գ. հալաթյանի գրչին է պատկանում նաև հայ պատմիչ Գրիգոր Մագիստրոսի գործերում իրանական գրույցների և ավանդու-

⁸⁵ Б. М. Данциг, *уշվ. աշխ.*, էջ 111.

⁸⁷ Գ. հալաթյանց, *Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ* (Վանայ, Կողպա, Ապարանայ բարբառներով), Պարիս, 1901.

⁸⁸ Նույն տեղում։

թյունների բացահայտմանը նվիրված ուշագրավ ուսումնասիրությունը⁸⁹, իրանագիտական առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև նրա «Ակնարկ Հայաստանի պատմության՝ Առաջավոր Ասիայում իրադարձությունների ընդհանուր ընթացքի կապակցությամբ» հետազոտությունը⁹⁰:

Խոսելով ռուսական գիտական կենտրոններում, ինչպես նաև Արևմտյան եվրոպայում, հետազոտական աշխատանք տանող հայ արևելագետների մասին, անհրաժեշտ է նշել, որ նրանք գնում էին այսպես կոչված «ակագեմիական» ուղիով, այսինքն նրանց հետաքրքրությունների առարկան զուտ գիտական կամ տեսական արեւելագիտությունն էր, որի զարգացման համար անմիջական խթան էր առավել խորը և բազմակողմանի հետաքրքրությունը Արևելքի նկատմամբ և որը հեռու էր գործնական կամ քաղաքական նպատակներ հետապնդող պրակտիկ արևելագիտությունից: Եվ այդ միանգամայն հասկանալի է, որովհետև եթե մեծ պետությունները և նրանց պատվերները կատարող արևելագետ-գիտնականների զգալի մասը ձեռնամուխ էին լինում Արևելքի ուսումնասիրությանը այդ երկրները ներթափանցելու, գաղութացնելու կամ տնտեսական ու քաղաքական ազդեցություն ձեռք բերելու նպատակով, ապա հայ արևելագետները լինելով պետականություն չունեցող և փոքր ազգի ներկայացուցիչներ, բնականաբար հեռու էին այդ լուրից և հետևաբար իրենց ուշադրությունը կենտրոնացնելու էին արևելագիտական այն հարցերի վրա, որոնք առնչվում էին սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հետ և կամ իրենցից ներկայացնում էին զուտ գիտական հետաքրքրություն: Իհարկե, միանգամայն այլ հարց է, որ ցարական կառավարությունը և Արևմտյան եվրոպայի կառավարող շրջանները հավասարապես կարող էին օգտվել հայ արևելագետների մատուցած անուղղակի ծառայություններից իրենց գաղութակալական նպատակների համար:

⁸⁹ G. Chalathlanz, Fragmente Iranischer Sagen bei Grigor Magistros WZKM Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1896, X Band, ss. 217--224. В. Ф. Миллер, Г. А. Халатьянц, Fragmente Iranischer Sagen bei Grigor Magistros. "Протоколы заседаний Восточной комиссии Императорского Московского археологического общества за 1895—1900 гг. (Особая пагинация)", "Древности восточные", 1901, т. II, вып. II.

⁹⁰ Г. А. Халатьянц, Очерк истории Армении в связи с общим ходом событий в Передней Азии, М., 1910.

Այսպիսով, ռուսական գիտական օջախներում աշխատող հայ արեւելագետները ոչ միայն նպաստում էին հայրենի արեւելագիտության զարգացմանը, այլև ռուս-արեւելագիտական մտքի առաջընթացին: Ռուսական գիտությունը,—գրում է Վ. Բարտոլդը,—հայկական ու վրացական ժագումով գիտնականներին է պարտական ինչպես Ռուսաստանում գիտական հայացքների տարածման, այնպես էլ հետագայում եվրոպական գիտության մեթոդների հիման վրա զրանց ճշտման համար⁹¹:

XIX դ. և XX դ. սկզբներին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի գիտական օջախներում հրատարակվում էին հայ հեղինակների բազմաթիվ գործեր (այդ թվում նաև թարգմանական), որոնք կամ ուղղակի նվիրված են Իրանին, նրա պատմությանը, մշակույթին և այլն, կամ անուղղակի կերպով լուսաբանում են իրանագիտական հարցեր: Թվարկենք այդ կարգի աշխատություններից մի քանիսը: Նադիր շահի տիրապետության շրջանում Իրանի ներքին կյանքի և արտաքին հարաբերությունների քննության են նվիրված Ս. Քիշմիշկե⁹², Սեյյան խան Միրանի⁹³ և այլոց ուսումնասիրությունները: Իրենց հետազոտություններում Իրանի պատմության, աշխարհագրության և մշակույթի հարցերին անդրադառնում են նաև Դավիթ Մելիք Շահնազարյան⁹⁴, Հ. Գաթրճյան⁹⁵, Ե. Սեթյան⁹⁶, Հ. Տեր-Հովհաննյան⁹⁷, Գ. Հովսեփյան⁹⁸, Ղ. Ինճիճյան, Ղ. Ալիշանը, և ուրիշներ: Սկսում են հրատարակվել նաև պարսկերեն լեզվի վերաբերյալ առաջին ուսումնասիրություններ

⁹¹ В. В. Бартольд, История изучения..., стр. 293.

⁹² С. Кушмиев, Походы Надир шаха в Герат, Кандягир, Индию и события в Персии после его смерти. Тифлис, 1899.

⁹³ Սեյյան խան Միրան, Թահազ շահի Վասպուրականի արշավանքներից, Թիֆլիս, 1892:

⁹⁴ Մելիք Շահնազարյան Դավիթ, Շահան-Ջրպետեան Յակոբ. Լանգե կադիկոս. Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կայսրութեան թագավորութեան Պարսից. Փարիզ. 1812—1818:

⁹⁵ Հ. Գաթրճեան, Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի ցմեր ժամանակ. Վիեննա:

⁹⁶ Ե. Սեթեան, Պատմութիւն չորից ինքնակալութեանց, Վենետիկ, 1833 (մասն. Բ. պարսից ինքնակալությունը):

⁹⁷ Հ. Տեր-Հովհաննյանց, Պատմութիւն Նոռ Զուզայու որ յԱսպահան, Նոր Զուղա, հտ. 1, 1880, հտ. 2, 1881:

⁹⁸ Գ. Հովսեփյան, Ռուսամ Զալ: Ժողովրդական վեպ (Մոկաց բարբառով) Թիֆլիս, 1905:

և դասագրքեր⁹⁹, թարգմանվում և հրատարակվում են եվրոպական արևելագետների ուսումնասիրությունները¹⁰⁰ և այլն:

XIX դ. սկսած հայ իրանագետները սկսում են լրջորեն զբաղվել իրանի հնագույն պատմության և մշակույթի հարցերով և հրատարակում են մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ: Միաժամանակ հիմք է դրվում հայ գիտական պահլավագիտությանը: Հայ պահլավագետները սկսում են զբաղվել ինչպես պահլավական գրական հուշարձանների թարգմանությամբ, այնպես էլ նրանց ուսումնասիրությամբ՝ գլխավորապես կապված հայկական պատմական-գրական հուշարձանների հետ: Մասնավորապես հայ ուսումնասիրողները աշխատում են վեր բարձրացնել հայ-պարսկական փոխհարաբերությունների հարցը, որը մինչ այդ հատուկ հետազոտության առարկա չէր հանդիսացել եվրոպական իրանագետների կողմից: Վերոհիշյալ պրոբլեմների գծով հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից այստեղ կարելի է հիշատակել հատկապես մի քանիսը¹⁰¹:

XIX դ. հայ գիտական միտքը մեծ հետաքրքրություն սկսեց դրսևորել նաև իրանական դասական գրականության նկատմամբ: Այդ այն ընդհանուր հետաքրքրության մի մասն էր, որ եվրոպական արևելագիտությունը սկսել էր տածել դեպի պարսից միջնա-

⁹⁹ Տե՛ս Մ. Բժշկյան, քերականութիւն բաղմալեզու Յորում բովանդակի՝ սկզբունք Արարացի, Պարսիկ, օսմանեան և թաթար բարբառոց հանդերձ ծանօթութեամբ այլ և այլ լեզուաց, Վենետիկ, 1844: Воскан Иоаннисянц. Учебник персидского языка, М., 1856.

¹⁰⁰ Շարիֆ Մաֆսիմիյան, Հայաստան, Քրդաստան, Արևմտյան Պարսկաստան, Վիեննա, 1904 (թարգմ. Բ. Պիլեզիկյանի):

¹⁰¹ Տե՛ս Յ. Վ. Սաևտալեան, Ասորեստանեայ և պարսիկ արձանագրութիւնք կամ նոցին քաղուածք, որոնք նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կր վերաբերին, Վիեննա, 1901: Ն. Քառամեանց, Պարթևները Պարսկաստանում և նրանց հարաբերությունները հայոց հետ (250 Քրիստ. առաջ — 226 Քրիստ. հետ), Վաղարշապատ, 1897: Բ. Սարգսյան, Երեք թագավոր մոզերու դրույցն հայկական մատենագրության մեջ և անոր կարևորությունը, Վենետիկ, 1900: Կ. Բասմաջյան, Դարեհի արշավանքն ի Հայս (սթանասերս հանդես, Պարիս, 1899, հտ. 1, գրք. Ա, էջ 6—45): Նույն հեղինակի Տրդատ թագավոր հայոց և Պարթևաց. (սթանասերս, 1905, № 1, էջ 5—13): Ս. Տերվիշյան, Պերսեպոլս սեպագիրք. (սթանդես ամսօրյա), Ա. տարի, էջ 8, 20, 52, 81, 145, 163. Բ. տարի, էջ էջ 185, 220. Գ. տարի, էջ 46: Ա. Արախանյանց, Արևելյան ազգերի հին պատմությունը (Եգիպտոս, Փյունիկիա, Միջագետք, Իրան) Թիֆլիս, 1891:

Ա. Գալֆայան, Համառոտ պատմութիւն հին ազգաց: Յորում բովանդակին պատմութիւնը հրէից, Ասորեստանեաց, Բաբելացոց, Եգիպտացոց, Մարաց, Պարսից, Պարթևաց, Կարբեղոնացոց, Յունացն, Ասորոց, Վենետիկ, 1849—1851:

դարձան գրականությունը: Լամենուրեք սկսեցին թարգմանվել ու հրատարակվել Ֆիրզուաին, Խայամը, Սաադին, Հաֆսզը, Ռումին, Զոմին և այլն: Հայ ընթերցող հասարակայնության լայն շրջաններում հատկապես մեծ ընդունելություն էր գտնում Ֆիրզուաու ռեհնամեի» տարբեր հատվածների բարձրարժեքի թարգմանությունները¹⁰²: Ընդ որում հայ իրանագետները պարսից պոեզիայի դոհարները թարգմանում էին ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն և ալ լեզուներով: Լեյսպես, Սաադիի ստեղծագործություններից ռուսերեն լեզվով թարգմանություններ առաջին անգամ (1831 թ.) կատարել է Մատվեյ Կամազովը (Մաթևոս Ղամազյան)¹⁰³, Իսկ Սաադիի «Գուեստանի» ամբողջական թարգմանությունը, ինչպես նշվեց վերևում, պատկանում է Ստեփանոս Նազարյանցին: Պարսից դասական բանաստեղծների ստեղծագործությունների առաջին թարգմանիչներից է նաև Պետրոս Մատթյանցը¹⁰⁴,

XIX դ. վերջին քառորդին և XX դ. սկզբին շարունակվում է ընդլայնվել իրանական ժողովրդի բազմադարյան պատմության, հողերը և նյութական կյանքի նկատմամբ գիտական հետաքրքրությունների շրջանակը: Լեվելին, նկատվում է ձգտում խորամուկ լինելու առանձին կոնկրետ հարցերի մեջ: Համաշխարհային արևելագիտության այդ ընդհանուր միտումը բնորոշ էր նաև հայ իրանագետներին, որոնց հետազոտությունները աստիճանաբար սկսում են ձևով բերել որակական նոր աստիճան: Մասնավորապես ռուս իրանագիտության ազդեցության տակ, որը դարի վերջին քառորդից սկսել էր լուրջ քայլեր կատարել Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և դադարաբանական ուսմունքների ուսումնասիրության ուղղությամբ, հայ իրանագետները ևս սկսում են լրջորեն զբաղվել Իրանի ներքին կյանքի, նրա սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական զարգացման, կրոնա-փիլիսոփայական դադարաբանությունների հարցերով:

Վերոհիշյալ պրոբլեմներին միմյալ աշխատություններից առաջին հերթին պետք է հիշատակել Լ. Տիրանովի «Պարսկաս-

¹⁰² Տե՛ս Ֆիրզուաի, Ռոստոմ և Սոհրար: Ամբողջ վեպ և զանազան հատվածներ Շահնամեից, Թարգմ. բնագիր պարսկերենից Մամվել Գյուլզադյան, Շուշի, 1893. Ֆիրզուաի, Զոհակ Բյուրասպի աժդահակ: Ամբողջ վեպ Շահնամայից թարգմանությամբ պարսկերենից Ս. Գյուլզադյան, Շուշի, 1894. Նույն թարգմանի «Սիավուշ Քեյ հոսրովից հատվածներ», Շուշի, 1895:

¹⁰³ Տե՛ս Журнал «Сын отечества», М., 1837, стр. 429—430.

¹⁰⁴ Սեյադի (Պետրոս Մատթյանցի), «Երգիծաբանություն» Սուլթան Մահմուդին ուղղված, 1884:

տանում հասարակական-տնտեսական հարաբերություններից» խորագրով մեծարժեք ուսումնասիրությունը¹⁰⁵։ Հեղինակը անձամբ եղել է Իրանում և տեղում նյութեր հավաքել հատկապես այդ երկրի սոցիալական, տնտեսական և հասարակական հարաբերությունների մասին։ Նա հիանալի բնութագրել է XIX դ. վերջերին Իրանի տնտեսական դրության և նրա զարգացման ու հեռանկարների հիմնական պրոցեսները, բացահայտել այդ երկրի ողջ սոցիալ-տնտեսական կառուցվածքի պատկերը։ Այս աշխատությունը արժեքավոր նյութ է տալիս նաև XIX դ. Իրանի ագրարային հարաբերությունների մասին։ Լ. Տիգրանովի ուսումնասիրությունը իսկապես մի նոր նվաճում էր իրանագիտության մեջ, որովհետև վերոհիշյալ հարցերը բարձրացվում էին ըստ էության առաջին անգամ և դրանք քննարկվում մեծ բանիմացությամբ և դիտական խորրվելու թույլություններով ու լայն ընդհանրացումներով։

Իրանի առևտրական-տնտեսական հարաբերությունները ուսումնասիրելու տեսակետից ոչ պակաս կարևոր արժեք է ներկայացնում նաև Գ. Տեր-Ղուկասյանի «Ռուսաստանի տնտեսական շահերը Պարսկաստանում» հետազոտությունը¹⁰⁶, որը բացահայտում է XIX դ. վերջի և XX դ. սկզբի ռուս-իրանական տնտեսական հարաբերությունների բնույթը և Իրանի արտաքին առևտրի զարգացման օրինաչափությունները։

XX դ. սկզբին հայ-իրանագիտության կարկառուն ներկայացուցիչներից մեկն էր Ատրպետը, որի աշխատությունները իր ժամանակին լայն ճանաչում են գտել ինչպես գիտական-մտավորական, այնպես էլ ռուս արևելագիտության շրջաններում։ Ատրպետի գրչին են պատկանում Իրանի հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությանը, գաղափարախոսությանը և մշակույթին նվիրված բազմաթիվ հետաքրքիր գործեր, որոնք իրենց արժեքը չեն կորցրել նաև մեր օրերում։

Այսպես, «Իմամաթ»¹⁰⁷ վերտառությամբ աշխատությունում հեղինակը իր առջև խնդիր է դնում քննության ենթարկել պարս-

¹⁰⁵ Л. Ф. Тиграпов, Из общественно-экономических отношений в Персии, Тифлис, 1905; Изд. 2, СПб., 1909.

¹⁰⁶ Г. И. Тер-Гукасов, Экономические интересы России в Персии, Пг., 1915.

¹⁰⁷ Ատրպետ, Իմամաթ, պատմական հետազոտություն, Ալեքսանդրապոլ, 1906։ Տե՛ս նաև ռուսերեն թարգմանությունը Ատրպետ, Имамат. Страна поклонников имамов (персидское духовенство). Историческое исследование, Александрополь, 1909.

կական շիիթական աղանդի կրոնական գաղափարախոսությունն ու աշխարհայեցողությունը: Մասնավորապես նա մանրակրկիտ վերլուծության է ենթարկում այն հարցը, թե ինչ պատճառների հետևանքով իրանում շիա կղերը մեծ ազդեցություն ունի երկրի ներքին գործերի, արտաքին քաղաքականության վրա և այլն:

Այս հարցերի պատասխանը Ատրպետը փորձում է գտնել իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերլուծության մեջ, այն ընդհանրելով այդ երկրի ներքին կյանքի օրինաչափություններից: Նա բազմաթիվ փաստեր է բերում ցույց տալու համար, որ շիա կղերի ձեռքերում կենտրոնացված էին հսկայական հողատարածություններ, կալվածքներ և այլն, որոնք և նրան տալիս էին ադպիսի մեծ ուժ ու կշիռ երկրի ներքին կյանքում և արտաքին հարաբերությունների բնագավառում:

Ատրպետի «Բաբի կամ Բեհայի»¹⁰⁶ աշխատությունը կարելի է համարել Ռուսաստանում բաբիզմի, ինչպես նաև բեհայիզմի մասին առաջին հետաքրքիր, փաստերով հարուստ ուսումնասիրությունը: Անցյալ դարի 40—50-ական թվականներին իրանում շափազանց լայն տարածում գտած բաբիզմի կրոնա-քաղաքական գաղափարախոսությունը (որը, ի վերջո, վերածվեց հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական շարժման գաղափարախոսության) վերլուծելու համար Ատրպետը մանրամասն քննության է ենթարկում XIX դ. առաջին կեսին տնտեսական-քաղաքական իրավիճակը իրանում: Մասնավորապես նա ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում կապիտալիստական պետությունների ներթափանցումը իրան առաջ բերեց տեղական արդյունաբերության անկում ու քայքայում: Այդ իր հերթին անդրադառնում է աշխատավորության ու մանր բուրժուազիայի վիճակի վրա, որը սկսում է արագորեն ունեզրկվել և քայքայվել: Այս բոլորը, Ատրպետի կարծիքով, երկրում հասունացնում էին քաղաքական որոշակի շարժման նախադրյալները: Պարսիկ ժողովրդի զարգացած աննշան դասը,—գրում է Ատրպետը,—արտաքին-հվրոպական վերանորոգության կարիք էր զգում, իսկ ամբոխը սպասում էր հազար տարից ի վեր անհայտացած Մեհթին (աստվածահայտնության), հուսալով, որ նա վերադառնալով... կառաջացնե աշխարհի վրա այն երանելի վիճակը, որ բոլոր ազգերը մի հոտի վերածած, մի

¹⁰⁶ Տե՛ս «Իմամաթ» ժողովածուում: Նաև ուսերեն լեզվով Атрпет, Бабы-ты и бехайты, Тифлис, 1910.

հովվի հովանիի տակ բարեբախտության մեջ կապրին և աշխարհը մշտնջենավոր դրախտի կվերածվի»...¹⁰⁹

Ատրպետը հիմնականում ճիշտ է բացատրում բաբիզմի առաջացման պատճառները, մանրամասն տալիս է նրա գաղափարախոսությունը և բացահայտում է Բաբի աշխարհայացքի էվոլյուցիան: Կանգ առնելով բեհայիզմի գաղափարախոսության վրա, որը բաբիզմի ռեակցիոն տարատեսակներից մեկն էր, Ատրպետը միանգամայն ճիշտ կերպով կոահում է, որ դա մի հետադիմական ուսմունք է:

Ձնայած իր մի շարք թերություններին, որոնք հեղինակի իդեալիստական ըմբռնումների արդյունք էին, Ատրպետի այս աշխատությունը լուրջ ավանդ էր բաբիզմի գաղափարախոսության ուսումնասիրման բնագավառում:

«Կալվածատիրությունը և կալվածատիրական հարկերը Ատրպատականում», «Ատրպատականի ադմինիստրացիան», «Դատավարությունը Ատրպատականում», «Թաղվիթ» և այլ աշխատություններում¹¹⁰, Ատրպետը մանրազնին վերլուծության է ենթարկում Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերը, ագրարային հարաբերությունները, հարկային սիստեմը և այլն: Նա բնորոշ փաստերով ցույց է տալիս շահական վարչության ամբողջ պատկերը, նրա թալանչիական էությունը, շահական աստիճանավորների կաշառակերությունը և այլն, մի խոսքով շահնշահի իշխանության ողջ փտածությունը:

Ատրպետի այս աշխատությունները գրված են 1905—1911 թթ. իրանական հեղափոխության սկզբին, մի հանգամանք, որը խոսում է այն մասին, որ հեղինակը աշխատում էր խորամուխ լինել Իրանում հեղափոխական շարժման բռնկման պատճառների մեջ: Նրա եզրակացությունները վկայում են, որ իրանական ժողովրդի զինված հեղափոխական պայքարը ֆեոդալների դասակարգի, Իրանում տիրող հետամնացության ու աղքատության դեմ Ատրպետը համարում էր միանգամայն օրինալափ ու բնական երևույթ:

«Մոհամմեդ Ալի-շահ. ժողովրդական շարժումը առյուծի և արևի երկրում»¹¹¹ աշխատությունը Ատրպետի լավագույն գործերից մեկն է: Այստեղ նա XX դ. սկզբի Իրանի սոցիալ-տնտեսական վի-

¹⁰⁹ «Իմամաթ» (ժողովածու), էջ 52:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹¹ Атрет, Мамед-Али шах. Народное движение в крае льва и солнца, Александрополь, 1909.

ճակի ֆոնի վրա աշխույժ և կենդանի ոճով պատկերում է իրանական հեղափոխության նախադրյալները: Ընդ որում հեղինակը չի դիմում զուտ նկարագրական մեթոդին, նա ոչ առանց հաջողության փորձում է բացատրել երևույթների պատճառները, դրսևորելով իրանական ներքին կյանքի փայլուն իմացություն:

Պետք է նշել, որ այս աշխատությունը իր ժամանակին իրանական հեղափոխության մասին Ռուսաստանում հրատարակված ուսումնասիրություններից լավագույնն էր: Լ. Ն. Տոլստոյը ստանալով Ատրպետի դիրքը, 1909 թ. հունիսի 19-ին իր պատասխան նամակում գրում էր. «Շատ շնորհակալ եմ Ձեզանից Ձեր գիրքը ուղարկելու համար: Ես նրանում գտա ինձ համար նոր և վերին աստիճանի հետաքրքիր շատ բաներ: Ինձ նույնպես հետաքրքրում է, դատելով վերնագրերից, Ձեր մյուս գրքերը ևս, որոնք ցույց են տրված 'Հայտարարության մեջ' «Շիրիթական հոգևորականություն», «Բաբելմ աղանդը», «Հարկային սիստեմը Պարսկաստանում», «Երիտթուրքական շարժումը»¹¹²:

Ատրպետի Ռահիմ-խան Սարդար. ժողովրդական շարժումը առյուծի և արևի երկրում»¹¹³ ուսումնասիրությունը նույնպես նվիրված է իրանական հեղափոխության շրջանի իրադարձություններին: Այստեղ մասնավորապես խոսվում է Ղարադաղի «շերերխանի» ցեղի առաջնորդ Ռահիմ-խան Սարդարի մասին, որը հեղափոխության տարիներին իրանական ռեակցիայի ամենակարկառուն ղոբավիզներից մեկն էր և 1908 թ. Մուհամմեդ-Ալի շահի հրամանով կատաղի պալքար էր մղում Թավրիզի հեղափոխականների դեմ: Աշխատության մեջ Ատրպետը հատկապես կանգ է առնում իրանական Ատրպատականում սահմանադրական շարժման վրա: Նույն մեծագույն համակրանքով է խոսում իրանական հեղափոխականների և Թավրիզի հերոսական պաշտպանների մասին, որը, անշուշտ, վկայում է հեղինակի քաղաքական հայացքների առաջադիմական բնույթի մասին:

Իրանի պատմության տարրեր հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել է նաև Համբարձում Առաքելյանը¹¹⁴: Նա հատկապես քնն-

¹¹² Л. Н. Толстой, Полн. собр. соч., т. 78, 1956, стр. 306—307.

¹¹³ Атрпет, Рахим-хан Сардар. Народное движение в стране льва и солнца, Александрополь, 1910.

¹¹⁴ Les guerres actuels en Perse, par H. Arakellian, Paris, 1908. Ն. Առաքելյան, Աղա-Մուհամեդ շահը Շուշում, Թիֆլիս, 1890:

նության է ենթարկել բաբիզմի գաղափարախոսության¹¹⁵, իրանի ազգային փոքրամասնությունների¹¹⁶, իրանահայության կյանքի պատմական դրվագների հետ առնչվող հարցերը¹¹⁷, իրանագիտական արժեքավոր նյութեր են գտնվում նաև Հ. Առաքելյանի ձանապարհորդական ուղեգրություններում, նոթերում և այլն¹¹⁸, Նրա գեղարվեստական գործերից «Ջհուդ Քուշան» վեպի¹¹⁹ բովանդակությունը ևս իրանական կյանքից է, որտեղ նկարագրված են շուհ Մուհամմեդ-աղա Ղաջարի վայրագությունները և սարսուռով լի ժամանակաշրջանը:

Իրանի ներքին կյանքի, միջազգային հարաբերությունների, մշակույթի և այլ հարցերի մասին Գ. Առաքելյանը բազմաթիվ հոդվածներ ունի նաև Հայկական մամուլի և մասնավորապես «Մշակ-ի» էջերում: Նույնանման բազմաթիվ հոդվածներ նա տպագրել է նաև ռուսական մամուլում:

XX դ. սկզբներից իրանագիտական բարձրարժեք գործերով սկսեց հանդես գալ ականավոր ռանասեր-պատմաբան Հարություն Թիրյաքյանը: Մասնավորապես նրա բազմաբեղուն գիտական դործունեության շնորհիվ հայ պահլավագիտությունը հասավ զարգացման մի նոր աստիճանի: Պահլավերենի ուսումնասիրությանը նվիրված իր հետազոտություններից բացի Հ. Թիրյաքյանը ունի նաև պահլավական հուշարձանների թարգմանություններ, գիտական առաջաքաններ ու ծանոթագրություններ¹²⁰, նա կատարել է նաև

¹¹⁵ H. Arakellian, Le Babisme en Perse. "Rev. de l'hist. des rel.", 43 (1904), ss. 72—74. Նույնի՝ Բաբականությունը Պարսկաստանում («Մուբն», 1901, № 2, էջ 93—103), նույնը գերմաներեն:

¹¹⁶ А. А. Аракелян, Курды в Персии. «Известия Кавказского отделения русского географического общества», 1904, т. XVIII, № 1.

¹¹⁷ Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը: Նրանց անցյալը, ներկան ու ապագան, ժ. Ա, Վիեննա, 1911:

¹¹⁸ Հ. Առաքելյան, Մի ամիս Արևելքում, Թիֆլիս, 1904. Նույնի՝ Թիֆլիսից-Դիլման: Տանջված Հայաստան: Ուղևորություն Թուրքաց Հայաստանում, Թիֆլիս, 1915. Նույնի՝ ձանապարհորդություն Դավրեժից Նախիջևան, Թիֆլիս, 1876:

¹¹⁹ Հ. Առաքելյան, Ջհուդ Քուշան, Թիֆլիս, 1902:

¹²⁰ Հ. Թիրյաքյան, Կարնամակ Արտաշիր Բարական, Փարիզ, 1906, Առաքելյան, Մարասպանդա անդարձ, Նյու-Յորք, 1909, Գանձ շայեկան, Փարիս Պերոզ, Խոսրով Կուստան, Մատիկան Ճատրակի, Թարգմանեց Հ. Թիրյաքյան, («Հանդես ամսօրեայ», 1955, էջ, 49—56, 189—204, 1956, էջ 491—518, 1957, էջ, էջ 191—213: Նույնը նաև առանձին գրքով «Չորս պահլավիկ ընդգրք», Վիեննա 1957: Նույնի՝ «Արևելահայ բառարան», Վիեննա, 1914. Նույնի՝ Հայ-իրանական ուսումնասիրությունը, Վիեննա, 1922:

պարսիկ դասական բանաստեղծների ստեղծագործությունների թարգմանություններ¹²¹։ Հ. Թիրյաքյանը¹²² ժամանակագրական կարգով Ս. Կյուլզադյանից հետո երկրորդն է, որ ձեռնամուխ է եղել Ֆիրդուսու թարգմանությանը։

XX դ. սկզբներին Իրանի պատմության և մշակույթի վերաբերյալ ուսումնասիրություններով հանդես են եկել նաև մի շարք այլ հայ դիտնականներ և մտավորականներ¹²³։

Հարկ է նշել, որ Իրանի և առհասարակ Արևելքի երկրների պատմության, տնտեսության, մշակույթի, քաղաքական կյանքի, հասարակական-քաղաքական հոսանքների և այլ հարցերի մասին ամենահարուստ և բաղմազան նյութեր կարելի է գտնել նաև XIX—XX դարերի հայ պարբերական մամուլում, ամսագրերում, հանդեսներում և այլն, որտեղ մենք հանդիպում ենք այնպիսի նյութերի, որոնց գիտական շրջանառության մեջ դնելը կարելի է համարել մեր օրերի հայ արևելագետների առաջնահերթ ու կարևոր խնդիրներից մեկը։

Ինչպես հայտնի է, XX դ. սկզբին հայ խոշոր բուրժուազիան ձգտում էր Մերձավոր և Միջին Արևելքի շուկաները Այդ նպատակի իրագործման համար հայ կապիտալիստները փորձում էին միացնել անջատ ու մեկուսացված հայկական բանկերը և ըստ հնարավորության կոնսոլիդացիայի ենթարկել ցիրուցան հայ կապիտալները։ Նրանց նպատակն էր ստեղծել բանկային մի զորեղ հաստատություն, որի գործունեությունը պետք է տարածվեր ոչ միայն Անդրկովկասի, այլև Հյուսիսային Իրանի և Արևմտյան Հայաստանի վրա։ Նախատեսվում էր նույնիսկ որոշ պայմաններով դնել Իրանում գործող Զեղչ-փոխատու բանկի ակցիաների ծրարը, որը պատկանում էր ռուսական պետբանկին¹²⁴։ Իր հերթին ցարա-

¹²¹ Սաադի Մոսլեի-էդ-Դիե, *Կոլեստան կամ Բուրաստան, թարգմ. պարսկերենից* Հ. Թիրյաքյան, *Նյու-Ցորք*, 1920։

¹²² Հ. Թիրյաքյան, *Շահնամակ Ֆիրդուսիի, դրվագ Արտաշիր Բաբականի, Նյու-Ցորք*, 1909։

¹²³ X. И. Кучук-Иоаннесов, *Армянская летопись о евреях в Персии XVII в. и о мессии Саббатае-Цевии, «Еврейская старина», т. X, Пг. 1918, № 2, стр. 60—68*; А. Арутюнов, *К антропологии айсоров. «Русский антропологический журнал», № 4, М., 1902*. Ա. Զավաթյան, *Պարսկաստանը և հայերը («Անահիտ», 1901, 1, էջ 8—11)*։ Ա. Արայան (*«Սամաատ», տեղագրական, վիճակագրական և ազգագրական տեղեկատու, Նոր Զուղա, 1906*)։ Ե. Յրանգյան, *Ատրպատական, Թիֆլիս, 1905* և այլն։

¹²⁴ Գ. Ա. Զաղեթյան, *Մոսկի անցյալից, Երևան, 1967, էջ 75—78*։

կան կառավարությունը աշխատում էր Արևելքում իրականացվող իր նախաձեռնությունների մեջ ընդգրկել նաև հայ խոշոր բուրժուազիային։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, օրինակ, համոզված էր, որ հայ կապիտալիստները ի վիճակի են ստեղծելու ճկուն և տեղական պայմաններին հարմարվող բանկային ապարատ, հաջողությամբ պայքարել իրանում Ռուսաստանի մրցակից Անդլիայի «Շահնշահական» բանկի դեմ, Մերձավոր և Միջին Արևելքի արտաքին առևտրի մեջ հաստատուն արմատներ գցել և ծառայել որպես վստահելի զենք ցարական դիվանագիտության զանազան կոմբինացիաների համար։

Պատահական չէ, որ երբ Ռուսաստանում ստեղծվեց, այսպես կոչված, «Արևելագիտության ընկերությունը», որը կոչված էր նպաստել Մերձավոր և Միջին Արևելքում ցարիզմի գաղութակալական ծրագրերի իրագործմանը¹²⁰, հայկական բուրժուազիան ակտիվորեն սկսեց մասնակցել նրա գործունեությանը, նույնիսկ գրավելով կարևոր տեղ նրա պատվավոր անդամների կազմում։

Պետք է ասել, որ անկախ իր հետապնդած զավթողական նպատակներից, վերոհիշյալ ընկերությունը կարևոր դեր խաղաց ռուս արևելագիտության մեջ, մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ուսումնասիրման բնագավառում։ Ընկերության հաճախակի կազմակերպած արշավախմբերի մեջ ընդգրկվում էին նաև հայազգի գիտնականներ և գործիչներ, որոնք մեկնելով Արևելք՝ առավելապես հետապնդում էին առևտրական, շինարարական և քաղաքական նպատակներ, սակայն միաժամանակ խալիս էին փաստացի հարուստ նյութ գիտությանը։ Այս իսկ տեսակետից հիշատակության արժանի է ռուսական կառավարության հանձնարարությամբ իշխան Ամասունու ուղևորությունը Պարսից ծոց, որտեղ XX դ. սկզբին Ռուսաստանը փորձեր էր կատարում ձեռք բերել նոր շուկաներ, իր ուղևորության արդյունքների մասին «Արևելագիտության ընկերության» ժողովում Ամատունու կատարած «Ռուսաստանի քաղաքական-տնտեսական շահերը Մերձավոր Արևելքում» և «Պարսից ծոցի նավահանգիստներում ռուսական առևտրի մասին» հաղորդումները¹²¹ (որոնք հետագայում հրատարակվեցին տարբեր հանդեսներում) անմիջապես գրավեցին Ռուսաստանի գիտական շրջանների ուշադրությունը որպես իրանի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ։

¹²⁰ Б. М. Данциг, Изучение Ближнего Востока в России, стр. 152.

¹²¹ «Общество востоковедения», Обзор деятельности общества за 1907—1908 гг., СПб., 1908.

Այսպիսով, հանրագումարի բերելով նախասովետական շրջանում հայ-իրանադիտության ձեռք բերած նվաճումները, այնտեղ է նշել, որ հայագետ-արևելագետների կողքին, որոնց հայ ժողովրդի պատմության և մշակույթին նվիրված աշխատություններում բնականության էին ենթարկվում նաև իրանի պատմական կյանքի ու մշակույթի տարբեր հարցերը, սկսում են հանդես գալ նաև ուսումնասիրողներ, որոնց հետաքրքրության և գիտական պրպտումների բուն առարկան շուղակի իրանն է, նրա սոցիալ-տնտեսական կյանքի պայմանները, պատմության ստորերը դրվագները, մշակույթի և դադափարախոսության հարցերը և այլն: Սա, անշուշտ, էական ու կարևոր առաջընթաց էր հայ-իրանագիտության մեջ, որը արդեն դառնում էր դիտական հետազոտությունների միանգամաչ լնքնություն բնադավաո:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո էլ ավելի մեծացավ հայ ժողովրդի հետաքրքրությունը դրացի իրանի պատմության և մշակույթի նկատմամբ: Դրա ցայտուն վկայությունն է վերջին հիսուն տարիների ընթացքում իրանագիտության բուն զարգացումը մեր հանրապետությունում, որը արժանի է առանձին ուսումնասիրության:

В. А. БАИБУРТЯН

ОЧЕРКИ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ИРАНИСТИКИ

Резюме

Исторические, экономические, политические и культурные связи армянского и иранского народов своими корнями уходят в глубь веков. Эти связи в первую очередь обусловлены соседством исторических территорий этих двух народов.

Начиная с V в. армянские историки прямо или косвенно делают предметом исследования многосторонние аспекты иранской истории, философские и религиозные взгляды, общественную и культурную жизнь. Тем самым истоки армянской иранистики берут начало с древних времен, представляя новому периоду востоковедческой науки богатый фактический и критический материал, который является большим вкладом в знание человечества о Востоке.

В статье в хронологическом порядке рассматриваются труды ранне- и позднесредневековых армянских историков, а также произведения авторов нового времени, в которых содержится глубокий и разносторонний материал об Иране

и сопредельных ему странах Ближнего и Среднего Востока.

В XIX в., в период расцвета европейского востоковедения, армянская востоковедческая наука на базе накопленного в прошлом богатого материала ввела в научный оборот ценные труды и литературу, которые позволили более широко осветить основные проблемы иранистики того времени. В этот период к рассмотрению ряда актуальных проблем иранистики впервые подошли армянские ученые-просветители Х. Абовян, М. Тагиадян и др.

В дело развития как армянского, так и русского востоковедения исключительно огромный вклад внес основанный в 1815 г. Московский Лазаревский институт восточных языков.

Армянское востоковедение XIX в. дало таких выдающихся деятелей, как С. Назарян, К. Патканян, К. Эзян (Эзов), Г. Халатян, М. Эмин и др., труды которых уже носили не описательный, а исследовательский характер.

С начала XX в. рамки исследований проблем Ирана со стороны армянских авторов значительно расширяются. Более того, намечается тенденция к все более глубокому освещению проблем и разработке конкретных вопросов.

В статье показывается, что, кроме России, другими не менее крупными очагами армянского востоковедения были страны Западной Европы, а также все те страны Азии, где имелись армянские колонии и культурные центры.

После установления Советской власти в Армении основной центр армянских востоковедческих исследований был перенесен в Ереван. Интерес армянских востоковедов к странам и народам Востока, в особенности Ирану, еще более возрос. Свидетельством этому служит развитие иранистики в нашей республике в течение последних пятидесяти лет, что является предметом специального исследования.